

ԷՋՄԻԱԾԻՆ

1987

Դ

Arm 146

ԽԴ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Հատոր

1987

Академия наук Армянской ССР
Государственная библиотека



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱՉԳԷՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՁԱՏԿԱԿԱՆ ՔԱՐՈԶԸ՝ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(19 ապրիլ 1987 թ.)

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Սիրեցեալ ժողովուրդ Մեր որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի:

Գոհութիւն Աստուծոյ ամենակալին, որ նաև այս տարի, այս գարնան առաւօտեան, Սուրբ Լուսաւորչի Գահից բերում եմ ձեզ մեծ աւետիսը մեր Փրկչի՝ Քրիստոսի Յարութեան:

Քրիստոս, Որդին Աստուծոյ, իջաւ երկիր, ծնուեց կատարելապէս որպէս մարդ, բերեց աշխարհին խօսքը տիեզերքի Արարչի ու բացեց լոյս ճանապարհը մարդու փրկութեան՝ մեղքի և մահուան խաւարից: Հազիւ երեք տարի տևեց նրա հրապարակային հրաշագործ կեանքը: Մարդիկ, նոյնիսկ իրայինները չհասկացան նրան: Նրա անսահման սիրոյն պատասխանեցին ատելութեամբ, նրա արդար խօսքին պատասխանեցին զրպարտանքով, նրա անհուն ներողամտութեանը պատասխանեցին հալածանքով ու նրան մահուան մատնեցին խաչափայտի վրայ: Յիսուս մեռաւ ողջ մարդկութեան մեղքերի համար:

Սակայն, ով հրաշք անիմանալի, նրա գերեզմանը դատարկ մնաց: Հրեշտակը, Իւղաբեր կանանց աւետեց. «Մի երկնչիք, զՅիսո՞ւս խնդրէք, զՆազովրեցի խաչեցեա՞լն. յարեաւ՝ չէ աստ» (Մարկոս ԺԶ 6):

Յիսուս մահացել էր իբրև մարդ և յարութիւն առել իբրև Աստուած: Պօղոս առաքեալը բացայայտում է. «Այժմ Քրիստոս յարեաւ մեռելներից, դառնալով սկզբնաւորումը ննջեցեալների յարութեան, որովհետև մարդով եղաւ մահը և մարդով մեռելների յարութիւնը» (Ա Կորնթ. ԺԵ 20—22):

Սիրելի հաւատացեալներ, Սուրբ Զատկի տօնախմբումը մեզանից ամէն մէկին ընծայում է աննման պահը ներհայեցողութեան ու խորհրդածութեան, մեր ապրած կեանքի իմաստի ու նպատակի մասին, պահ՝ երբ միտքարում ենք քրիստոնէական մեծ ճշմարտութիւնների լոյսով՝ մեղքերի կապանքներից ազատագրուելու, մահից յետոյ գոյատևելու և յաւիտենական կեանք ժառանգելու հաւատքով:

Ինչպէս հողի մէջ նետուած ցորենի հատիկը պտուղ է տալիս, այնպէս էլ գերեզման իջած Քրիստոս վերստին կեանք է զգենում, դառնալով սկզբնաւորումը ննջեցեալների վերածննդեան: Քրիստոնէական մեծ յոյսն է այս, որ մշտապէս ծաղկում է մեր հոգիներում: Լսենք Ս. Յովհաննէս Ոսկեբերանին՝ «Բոլորդ քաղցրացէք յարութեան խնջոյքից, բոլորդ արբէք յարութեան բաժակից: Ոչ ոք թող չտխրի, ոչ ոք թող չողբայ իր մեղքերի համար, վասնզի թողութիւնը ճառագայթեց գերեզմանից: Ոչ ոք թող չվախենայ մահից, զի Փրկչի մահը մեզ ազատագրեց»:

Քրիստոսի Յարութեան խորհուրդը, կեանքում և պատմութեան տարածքում, ծնունդ է տալիս ոգեկան ստեղծարար մղումների՝ ի ծաղկումն կեանքի մշտանորոգ ուժերի, յազատագրումն մարդու՝ մեղքի ճիրաններից և ի յաղթութիւն ճշմարտի ու բարւոյ պատուիրանների: Այսպէս է, որ Սուրբ Զատիկը դառնում է տօնախմբումը մարդասիրութեան՝ ընդդէմ ատելութեան, համերաշխութեան՝ ընդդէմ թշնամութեանց, խաղաղութեան՝ ընդդէմ խռովութեանց, արդարութեան՝ ընդդէմ բռնութեանց:

Մեզ, հայ քրիստոնեաներիս համար, ինչպիսի՞ հոգեկան ցնծութիւն է՝ լսել ամէն սուրբ պատարագի ընթացքում յաղթական աւետիսը Սուրբ Յարութեան՝

«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ,
Խաղաղութեան ձայն հնչեցաւ,
Թշնամութիւնն հեռացաւ,
Սէրն յընդհանուրս սփռեցաւ»:

Այո՛, մեզ համար, բոլորիս համար, Քրիստոսի հրաշալի Յարութիւնը գերագոյն գրաւականն է խաղաղութեան սրբազան գաղափարի յաղթանակի, ազգամիջեան թշնամութեանց վերացման և սիրոյ սփռումի համայն մարդկութեան վրայ:

Մանաւանդ մեր օրերին, թող էլ աւելի հզօր ու յաղթական հնչի ձայնը խաղաղութեան, որպէսզի հեռանան ու վերանան թշնամութիւնները մարդկային կեանքի բոլոր սահմաններից, որպէսզի սէրն ու համերաշխութիւնը սփռուեն աշխարհով մէկ հորիզոնից հորիզոն:

Սիրելի հաւատացեալներ, այս է եղել մշտական աղօթքը մեր Մայր Եկեղեցու դարեր շարունակ, որովհետև դարեր ու դարեր, մեր ազգի զաւակները իրենց հայրենի հողի վրայ իսկ տնապէս տառապել են ու յաճախ նահատակուել արիւնարբու արշաւողների ու բռնակալների լծի ներքոյ, միշտ երազելով թէ ե՞րբ պիտի ծագի արեգակը խաղաղութեան և արդարութեան:

Ու եթէ ես, առաջին սպասաւորը Հայ Եկեղեցու, ամէն առիթներով իմ ձայնը բարձրացնում եմ յանուն ազգութիւնների խաղաղ գոյակցութեան, յանուն ատոմական զէնքերի արգելման, յանուն ընդհանուր զինաթափման, իմ ծանր մտահոգութիւնն է նաև՝ մեր վերածնուած Մայր Հայրենիքի ճակատագիրը, Սարդարապատի հերոսական յաղթութիւնից յետոյ մեռելներից յարութիւն առած մեր ժողովրդի ճակատագիրը, որի արդար ու խաղաղ կեանքի առաւօտը բացուեց, մեր ազգային պետութեան հիմնադրումով սովետական ազգութիւնների մեծ ընտանիքում: Այդպէս է որ՝ անցեալում բազում տառապանքներ ու հարստահարութիւններ կրած և 1915-ի ցեղասպանութիւնն ապրած մեր ժողովրդի համար, վերջապէս հնչեց ձայնը խաղաղութեան, հեռացան թշնամութիւնները մեր սահմաններից, և մեր զաւակները սիրով միաբանած, տխուր անցեալի աւերակների վրայ հերոսական ճիգերով կերտեցին նոր հայրենիք, նոր երգերով, նոր խօսքով: Իրականացաւ մարգարէութիւնը մեծ բանաստեղծի՝ «Ու երբ պիտի գայ հանուր կեանքի արշալոյսը վառ հագած, հազար հազար լուսապայծառ հոգիներով ճառագած»:

Այսօր, Սուրբ Զատկի օրով, երբ փառաբանում ենք Սուրբ Յարութիւնը մեր Փրկչի՝ Յիսուսի Քրիստոսի և միշտ յաղթող գաղափարը խաղաղութեան ու արդարութեան, եկէք փառաբանենք նաև վերածնունդը և ծաղկումը մեր Մայր Հայրենիքի, վերածնունդն ու ծաղկումը մեր անմահ ժողովրդի որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ այժմ և յաւիտեանս». ամէն:

«ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»:





ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ
ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ
ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հռոմ),

Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),

Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԻՈԴՈՐՈՍԻՆ (Երուսաղեմ),

Ղպտի Ուղղափառ Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԸՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Կահիրե),

Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ԹԵՔԼԵ ՀԱՅՄԱՆՈԹԻՆ (Ադիս Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ (Քոթայամ),

Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),

Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍՏԻՆ (Բուխարեստ),

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),

Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔԶԱ Ա ԻՎԱՍԻՆ (Դամասկոս),

Անտիոքի և համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),
Անտիոքի Ասորի Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ-ԻՆ (Բեյրութ),
Անտիոքի և համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ Դ-ԻՆ (Դամասկոս),
Քենթրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՌՈԲԵՐՏ ՌԸՆՍԻԻՆ (Լոնդոն),
Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),
Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն ԳԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա),
Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ԴՈՐՈՖԵՅԻՆ (Պրագա),
Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոզիա),
Անտիոքի Մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն ՄԱՐ ՆԱՍՐԱԼԼԱ ԲՈՒՏՐՈՍ ՍՖԵՅՐԻՆ (Կերկե),
Նորին Ամենապատվություն կարդինալ ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Վատիկան),
Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն Դոկտ. ՀԵՐՄԱՆ ԳՐՈՒԵՐԻՆ (Վիեննա),
Քրիստոնեական Միության Քարտուղարության նախագահ, Նորին Ամենապատվություն կարդինալ Ժ. Գ. Մ. ՎԻԼԼԵԲՐԱՆԴՍԻՆ (Վատիկան),
Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն ԺԱՆ ՄԱՐԻ ԼՅՈՒՍՏԻԺԵԻՆ (Փարիզ),
Լիոնի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ ԱԼԲԵՐ ԴԵԿՈՒՐՏԵԻՆ (Լիոն),
Լատվիական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԷՐԻԿ ՄԵՍՏԵՐՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԷԴԳԱՐ ՀԱՐՔԻՆ (Տալլին),
Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՉԻՆԻԻՆ (Երուսաղեմ),
Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի նախագահ, Նորին Սրբազնություն ԿԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար դոկտ. ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈՅԻՆ (Ժնև),
Մխիթարյան միաբանության մեծավոր Հայր ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Այս օրերին մխիթարվում են մեր սրտերը, որ մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության ավետիսով մարդկային աշխարհի վրա վերստին իջնում է «առավոտը լուսո» և պայծառանում բոլորիս հոգիներում հույսը՝ մեր կյանքի վերանորոգման, հույսը՝ մեղքի և չարիքի խափանման, հույսը՝ բարու հաղթության, հույսը՝ մեր սրտերի խաղաղության:

Զատկական շնորհաբաշխ այս օրերին Մեր աղոթքն է նաև, որ Տիրոջ սիրո և խաղաղության ոգին առատորեն իջնի համայն աշխարհի վրա, որպեսզի ժողովուրդներն ու պետությանց պատասխանատու ղեկավարները գտնեն ճանապարհները կառուցելու մի աշխարհ առանց պատերազմների, առանց սրի և հրի:

Ձերդ Սրբություն, թույլ տվեք, որ հույսի և լույսի այս առավոտյան, Սուրբ Էջմիածնից բերենք Ձեզ՝ Մեր եղբայրական սերն ու հարգալից ողջույնը, մաղթելով Ձեզ տևական քաջառողջություն և երկնային օգնականություն, հաջողությամբ պսակելու համար Ձեր բոլոր աստվածահաճո հոգեշեն իրագործումները:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ի պատասխան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության շնորհավորական գրությունների, ստացվել են քույր Եկեղեցիների կրոնական պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների կողմից այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական սիրո, եղբայրության ու համագործակցության ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ»:

Ձերդ Ամենապատվություն,

Մեր Փրկչի Սուրբ Հարության ավետիսով բոլորիս վրա վերստին իջնում է «առավոտը լուսո» և պայծառանում հույսը՝ մեր կյանքի վերանորոգման, հույսը՝ մեղքի ու չարիքի խափանման, հույսը՝ բարու հաղթության, հույսը՝ մեր հոգիների խաղաղության:

Զատկակա:ն շնորհաբաշխ այս օրերին մեր Մայր եկեղեցու կամարների ներքո և մեր ժողովրդի կյանքում թող առատապես լինի «առավոտ լուսո», թող ճառագայթի մշտապես ոգին համերաշխ եղբայրության, թող բացվի անթառամ ծաղիկը սիրո և խաղաղության:

Ամենայն Հայոց աստվածակառույց Սուրբ Էջմիածնից Ձերդ Ամենապատվության և պատմական Աթոռիդ ուխտապահ սպասավորներին ու հավատացյալ ժողովրդյան՝ ողջույն, սեր և օրհնություն հայրապետական:

«Սրբեցէք ի բաց զհին խմորն՝ զի եղիջիք նոր զանգուած, որպէս էքդ անխմորք. քանզի զատիկ մեր զեռաւ Քրիստոս» (Ա Կորնթ. Ե 7): Ամեն:

Եղբայրական սիրո ողջունիվ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՂՋՈՒՅՆՆԵՐ ԱՄՆ-Ի ԵՎ ԿԱՆԱԴԱՅԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ԵՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻՆ

ԳԵՐԱՇՆՈՐՀ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ԲԱՐԵՋԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՍՊԱՍԱՒՈՐՔ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Տիրոջ ողորմութեամբ անա վերատին կը գտնուիք կողք-կողքի, քննարկելու համար վերջին տարուոյ շրջանին ձեր հոգեշէն ու կրթանուէր գործունէութիւնը և գնահատելու իրագործումները, այսպիսով ձեռք բերելու նոր փորձառութիւններ, յառաջիկայ տարիներուն առաւել նպատակասլաց դարձնելու ձեր աշխատանքը:

Իրապէս ձեր առաջ բացուած կայ գործունէութեան ընդարձակ ասպարէզ, բազում հնարաւորութիւններով, բայց և դժուարութիւններով: Անհրաժեշտ է ունենալ ամուր հաւատք, աշխատանքի անընկճելի եռանդ ու լաւատեսութեան ոգի, օգտուելու նպաստաւոր հնարաւորութիւններէն և յաղթահարելու համար դժուարութիւնները: «Հոգւով եռացէք, Տեառն ծառայեցէք, յուսով խնդացէք, նեղութեան համբերեցէք, աղօթից ստէպ կացէք» (Հռոմ. ԺԲ 12):

Հայ ափիւռքի հոգևոր և ազգային կեանքի գոյատևումը մեծ չափով պայմանաւորուած է մեր Եկեղեցւոյ առաքելութեամբ և մեր հոգևոր ու կրթական մշակներու իրագործումներով:

Միշտ արթուն մնացէք ու եռանդով գործեցէք սիրովը Քրիստոսի, տեսիլքովը Իշման Սուրբ Սեղանին և խորհուրդովը յաւերժական Արարատին:

Արդ, Մենք, ձեր Հայրապետը, Սուրբ Էջմիածնէն ճառագայթող Աստուծոյ օրհնութեամբ՝ կը մաղթենք, որ հաւատարիմ ձեր սրբազան ուխտին, շարունակէք անսակարկ ձեր աշխատանքը հոգևոր կարգապահութեամբ, սիրով միաբան ձեր սրբազան Առաջնորդի շուրջ:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13—14): Ամէն:

ՎԱՉԳԷՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
3 ապրիլ 1987 թ.

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ»

Այսօր Ձեզ վերստին կ'ողջունենք Փրկչին մեր Յիսուսի Քրիստոսի Յարութեան աւետիսով, որովհետև տակաւին կը գտնուինք անոր կենարար շնորհներուն ներքև: Եւ երանի թէ այդ շնորհները տևապէս ճառագայթէին ձեր բոլորի վրայ, մեր եկեղեցեաց ու հաւատացեալներուն վրայ, որպէսզի առաւել հոգևոր ներշնչանքով, առաւել եկեղեցաշէն եռանդով, առաւել համահայկական տեսիլքներով դուք բոլորդ ձեռք-ձեռքի տուած, համախումբ ձեր սրբազան առաջնորդ Հօր շուրջ, շարունակէք ձեր աշխատանքը հետզհետէ աւելի պտղառատ իրագործումներով:

Վստահ ենք որ դուք ամենքդ՝ հոգևորական թէ աշխարհական ներկայացուցիչներ ձեր համայնքներուն, տոգորուած բարի եռանդով, Պատգամաւորական ժողովիդ կը ներկայանաք նոր սպասումներով, կը բերէք նոր ծրագիրներ, նոր առաջադրանքներ շինարար ոգիով պատասխանելու այն հարցերուն, որոնք կը դրուին ձեր առաջ, ձեր եկեղեցիներու առաջ այս օրերուն:

Մենք մխիթարուած սրտով կը հետևինք ձեր աշխատանքներու և իրագործումներու ընթացքին և Փրկչի Իշման Ս. Սեղանի առաջ կ'աղոթենք որ Տէրը ձեզ միշտ զօրավիգ մնայ և օգնական: Մխիթարուած ենք նաև այն յոյսով, որ ձեր ճիգերը յաջողութեամբ պիտի պսակուին ի կենսագործումն ձեր երկրի մէջ Հայ Եկեղեցւոյ և համայն հայ հաւատացեալ ժողովուրդի կանոնական և հոգևոր լիակատար միութեան, առանց խաբուսիկ սակարկութեանց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնութեան ներքև, որ յաւիտենական կեդրոնն է մեր քրիստոնէական հաւատքի և մեր առաքելական Մայր Եկեղեցւոյ, մօտ երկու հազար տարիներէ ի վեր, Մայր Հայաստանի սուրբ հողի վրայ, Արարատի փեշերուն, երանելի Սուրբ Գրիգոր Լուսաւորչի աստուածային տեսիլքով: Ձեզի կը մաղթենք ազնիւ համարձակութիւնը՝ սուրբ պահպանելու քրիստոսատես Էջմիածնի խոհուրդը:

Սուրբ Էջմիածնով և միա՛յն Սուրբ Էջմիածնով հնարաւոր կ'ըլլայ վերահաստատել միութիւնը Հայ Առաքելական Եկեղեցւոյ: Տայ բարին Աստուած որ Մեր գահակալութեան մայրամուտին գոնէ կարողանայինք ողջունել վերադարձը մեր բաժանեալ հարազատ զաւակներուն: Այո, վշտով, հոգեկան տառապանքով է որ միշտ Մեզի հարց տուած ենք թէ երկար տարիներէ ի վեր միութեան մասին խօսող անոնց ներկայացուցիչները ինչո՞ւ անգամ մը գոնէ չեն խորհած պաշտօնապէս Մայր Աթոռ այցի գալ Փրկչի Իշման Սեղանի առաջ, միութեան և համերաշխութեան իրենց ուխտը կատարելու համար: Մենք տիւ և գիշեր սիրով ու կարօտով պիտի սպասենք որ բացուի վերջապէս այդ առաւօտը:

Առանց հայրենական Սուրբ Էջմիածնի՝ կը տժգունի պատմական իսկութիւնը հայկական քրիստոնէական հաւատքի ու տակաւ կը հանգի ջերմութիւնը Մայր Հայաստանի համահայկական զգացողութեան:

Այս մտորումներով, այս յորդորներով, հարազատներ Մեր, ձեզի կը բերենք Մեր հայրական սիրոյ ողջոյնը և օրհնութիւնը հայրապետական, մաղթելով բոլորիդ գործելու անսպառ ուժ ու եռանդ ի շինութիւն ձեր համայնքներու հոգևոր կեանքի և ի պայծառութիւն ձեր եկեղեցեաց:

«Գիշերն մերժեցաւ և տիւն մերձեցաւ. ի բաց արասցուք այսուհետև զգործսն խաւարի և զգեցցուք զզէնն լուսոյ» (Հռոմ. ԺԳ 12): «Ապա, այսուհետև զհետ երթիցուք զխաղաղութեան և զշինութեան որ առ միմեանս» (Հռոմ. ԺԴ 19): Ամէն:

ՎԱԶԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
3 ապրիլ 1987 թ.

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻՆ

Լոս Անճելըս

Սիրեցեալ Եղբայր Մեր ի Քրիստոս, Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեան, բարեջան թեմական առաջնորդ, և նուիրեալ արժանաշնորհ հոգևոր սպասաւորներ եկեղեցեաց:

Մեծ ուրախութիւն է Մեզի համար հաստատել որ Դուք մէկ սիրտ, մէկ հոգի համերաշխ մթնոլորտի մէջ, Սուրբ Հոգւով լուսաւորուած, մէկտեղուած էք՝ միասին աղօթելու, միասին անդրադառնալու անցնող տարւայ ձեր իրագործումներուն, ձեր մտահոգութիւններուն և ձեր ակնկալութիւններուն, և այդ փորձառութեան լոյսի տակ առաւել գօտեպնդուած էք շարունակելու ձեր սրբազան առաքելութիւնը ձեր հաւատացեալ ժողովուրդի ծոցին մէջ, որպէսզի առաւել լուսաւորուի անոնց կեանքը սուրբ Աւետարանի լոյսով, որպէսզի առաւել պայծառանայ անոնց ընտանեկան և ընկերային կեանքը քրիստոնէական բարոյական պատուիրաններու կենսագործումով, որպէսզի անոնց կեանքին մէջ առաւել ճառագայթեն մեր մայրենի լեզուն և հայ ազգային մշակոյթի արժէքները:

Ձեզի բոլորիդ կը մաղթենք անսպառ ուժ ու եռանդ, աննկուն կամք և անհատնում լաւատեսութիւն, կեանքի կոչելու համար բոլոր աստուածահաճոյ ու ազգապահպան ձեր առաջադրանքները:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն և Մեր սրտէն բոլորիդ Մեր հայրական սէրն ու գնահատանքը, բոլորիդ Մեր քաջալերանքը և Մեր օրհնութիւնը:

«Եւ արդ, զհանդէս սիրոյ ձերոյ և զմերոյ պարծանացն վասն ձեր ի դոցա ցուցջիք յանդիման ամենայն եկեղեցեաց» (Բ Կորնթ. Ը 24): Ամէն:

ՎԱԶԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
12 մարտ 1987 թ.

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻՆ

Լոս Անճելըս

Մեր քրիստոնէական լոյս հաւատքի կեդրոն աստուածակառոյց Սուրբ Էջմիածնէն հայրական սիրոյ ողջոյն և օրհնութիւն Ամերիկայի Միացեալ Նահանգաց Արևմտեան Տիրախնամ թեմիդ Պատգամաւորական Ժողովիդ և մասնակցող բոլոր հոգևորական և աշխարհական յարգարժան անդամներուդ:

Վստահ ենք թէ այս պահուն, բոլորդ Սուրբ Հոգւով ներշնչուած համախմբուած էք ձեր հոգևոր Տեսուչ և առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոսի շուրջ, միասնաբար քննարկելու և գնահատելու անցնող տարւայ թեմիդ եկեղեցական, կրթական և մշակութային գործունէութիւնը և ապա ծրագիրներ մշակելու՝ յառաջիկայ ձեր աշխատանքներուն և իրագործումներուն համար, յառաւել շինութիւն ձեր համայնքներու և հաւատացեալներու կրօնական կեանքի և յառաւել պայծառութեան ձեր եկեղեցիներու:

Մենք, Սուրբ Էջմիածնէն կը հետևինք ձեր հոգեշէն ու ազգանուէր գործունէութեան և հոգեպէս մխիթարուած ենք հաստատելով ձեր յաջողութիւնները, ձեր նուիրեալ եռանդը և ձեր որդիական սէրն ու հաւատարմութիւնը Մայր Աթոռիս և անձամբ Մեր հանդէպ:

Վստահ եղէք թէ հոգով սրտով ձեզի հետ ենք, ձեզի հետ են Մեր աղօթքները, ձեզի հետ են Մեր մտածումներն ու բարի մաղթանքները:

Աստուածային Սուրբ Էջմիածնէն, Փրկչի Իջման Սուրբ Սեղանէն մշտապէս կը ճառագայթեն Սուրբ Հոգւոյ շնորհները և կը բաշխուին բոլոր Մեր հաւատացեալ զաւակներուն, ուր որ գտնուին անոնք աշխարհի ճամբաներու վրայ:

Հսկեցէք և արթուն կացէք որ այս շնորհները, այդ լոյսը, մշտապէս վառ մնայ այստեղ Սուրբ Էջմիածնի մէջ, սուրբգրական Արարատի ստորոտը, որպէսզի այն մշտապէս բաշխուի ազատ ու անարատ համայն հայութեան որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի:

Ձեզի բոլորիդ վերստին բիւր օրհնութիւն և մշտական յաջողութիւններ ձեր սրբազան առաքելութեան ճամբուն վրայ:

«Այսուհետև եղբարք, ողջ լերուք, հաստատուն կացէք՝ մխիթարեցուք, միաբան լերուք, խաղաղութիւն արարէք. և Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ» (Բ Կորնթ. ԺԳ 11): Ամէն:

ՎԱՉԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
12 մարտ 1987 թ.

ԲԱՐԵՊԱՇՏ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ

Լոս Անճելըս

Ազնիւ տիկիններ և օրիորդներ,

Այսօր ուրախ սրտով ձեզի կը բերենք Աստուծոյ օրհնութիւնը մեր քրիստոնէական հաւատքի բազմադարեան կեդրոն Սուրբ Էջմիածնէն, բարի մաղթանքով, որ Տէրը Ձեզի զօրացնէ Սուրբ Հոգիով, որպէսզի նաև յառաջիկայ տարիներուն դուք շարունակէք ձեր եկեղեցանուէր աշխատանքը ձեր հոգևոր առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոսի հովանիին ներքև:

Մեր Եկեղեցին աղօթքի Տուն է ու նաև մայր դաստիարակը մեր հաւատացեալ ժողովուրդին: Եկեղեցին է որ սուրբ Աւետարանի լոյսով և շունչով կը հանդիսանայ դաստիարակը մեծ ազգի զաւակներուն, մանաւանդ երիտասարդ սերունդներուն:

Մենք կը խորհինք թէ հոգևոր սպասաւորներուն կողքին մանաւանդ դուք բարեպաշտ կիներդ կոչուած էք վճռական դեր կատարելու իբրև դաստիարակներ ձեզի յատուկ մայրական սիրով և հոգատարութեամբ, որպէսզի ձեր համայնքի պատանիներն ու երիտասարդները սնուին, աճին ու հասակ նետեն սուրբ Աւետարանի շունչով և քրիստոնէական բարոյականի պատուիրաններով: Մանաւանդ մեր օրերուն քրիստոնէական դաստիարակութիւնը, բարոյական նկարագրի կազմութիւնը հետզհետէ առաւել անհրաժեշտութիւն կը դառնան, նոր սերունդները հեռու պահելու համար պէս-պէս մոլութիւններէ և անկարգութիւններէ, որոնք յաճախ կը տանին դէպի հոգեկան և մարմնական կործանում:

Մեր պարտքն է և յորդորը որ Եկեղեցւոյ սուրբ հովանիին ներքև նուիրուիք այդ բարոյական դաստիարակութեան գործին անսպառ եռանդով:

Թող հայ ազգի նոր սերունդները ապրեն ու զարգանան առողջ մարմիններով և առողջ հոգիներով ու դառնան բարի զաւակները իրենց ծնողաց, բարի զաւակները մեր Եկեղեցիին:

Հսկեցէք նաև որ անոնք մնան հաւատարիմ ու նուիրեալ զաւակները մեր ազգին, հպարտ ըլլան որ հայ ազգի զաւակներն են, հպարտ ըլլան իրենց մայրենի լեզուով, հպարտ ըլլան հայոց հերոսական պատմութեամբ, հպարտ ըլլան սրբազան լեռ Արարատով ու մեր վերածնած Մայր Հայաստանով:

Օրհնութեամբ՝

ՎԱԶԳԷՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
12 մարտ 1987 թ.

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԳԱՆԱՏԱՅԻ

Թեմական առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգէն եպիսկոպոսին և յարգարժան պատգամաւորներուն,

Քրիստոսատես Սուրբ Էջմիածնէն հայրական սիրով կ'ողջունենք տիրախնամ թեմիդ Պատգամաւորական Ժողովը և կը բերենք բոլորիդ Մեր բարի մաղթանքը որ ձեզի յատուկ հոգևոր եռանդով ու նուիրումով քննարկէք ձեր առաջ դրուած հարցերը, յառաւել շինութիւն թեմիդ հաւատացեալ ժողովուրդի կրօնական կեանքի և յառաւել պայծառութիւն ձեր աղօթքի Տուներուն:

Այս հանդիսաւոր առիթով ձեզի ամենուդ կը բերենք Մեր ջերմ գնահատանքը ձեր եկեղեցաշէն իրագործումներուն համար, մանաւանդ որ համեմատաբար շատ կարճ ժամանակաշրջանի ընթացքին ձեր կորովի առաջնորդ Հօր իմաստուն վերատեսչութեան ներքոյ և բոլորիդ եռանդուն ջանքերով ու համերաշխ գործակցութեան ոգիով չքացաւ անցեալի ձեր ներքին վերիվայրումները, և դուք կարողացաք ձեր նոր թեմը իր եկեղեցական համայնքներով վերակազմակերպել, կարգ ու կանոնի և շինարար աշխատանքի պայմաններու մէջ:

Արտանց կը մաղթենք որ նոյն շինարար ոգիով, նոյն համերաշխ գործակցութեան մթնոլորտի մէջ շարունակէք ձեր սկսած աշխատանքը, կեանքի կոչել կրօնական, կրթական և մշակութային նոր իրագործումներ, միշտ ոգեշընչուած քրիստոսակառոյց Սուրբ Էջմիածնի խորհուրդով և յաւերժական մեր Արարատի տեսիլքով:

Ընդունեցէք Մեր հայրական սէրը, Մեր քաջալերանքը, Մեր օրհնութիւնը:

«Քանզի ո՞վ է մեր յոյս կամ խնդութիւն կամ պսակ պարծանաց մերոց, եթէ ոչ դուք ի Տէր՝ առաջի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի նորա գալստեան: Զի դուք էք փառք մեր և խնդութիւն» (Ա. Թես. Բ 19—20): Ամէն:

ՎԱԶԳԷՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
6 ապրիլ 1987 թ.



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԲԸՄ-Ի ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

ՏԻԱՐ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Միչիգան, ԱՄՆ

Մեր սրտի բովանդակ ջերմությամբ Ձեզի կմաղթենք ապահով-անվրեպ բուժում և շուտափույթ ապաքինում, նաև հոգեկան կորով՝ միշտ լավատես տրամադրությամբ: Եվ տակավին երկար արևշատ տարիներ՝ շարունակելու Ձեր ազգաշեն առաքելությունը: Մնանք աղոթող Ձեր կյանքին, Ձեր արդար երազանքներու հետագա իրականացումներուն համար:

Ողջ լերուք զորացյալ Սուրբ Հոգվով,

Սիրով, կարոտով, օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,

21 ապրիլ 1987 թ.

ՀԲԸՄ-Ի ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Խորապես զգացված եմ Ձեր ջերմ օրհնանքներից և առողջության լավագույն մաղթանքներից: Ձեր մխիթարող խոսքը հասավ, երբ ես շատ կարիք ունեի դրան, որպեսզի ուժ ստանամ և բարոյական կորով՝ ոտք դնելու իմ կյանքի ամենադժվար ժամանակները: Իմ վիրահատությունը անցավ հաջողությամբ: Ձեր աղոթքներով և իմ շուրջ գտնվող բազում ընկերների լավագույն մաղթանքներով հույս ունեմ շուտով ապաքինվել և շարունակել իմ պատասխանատվությունները մեր հասարակական կյանքում:

Անկեղծ շնորհակալություն Ձեր բարի մաղթանքների և աղոթքների համար:

Մնամ հարգանոք՝

Ձեր

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Միչիգան,

28 ապրիլ 1987 թ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՐԵՎԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սույն թվականի ապրիլի 3-ին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդի և թեմական խորհրդի հրավերով այցելեց Արարատյան թեմ՝ Ս. Սարգիս եկեղեցի՝ նախագահելու «Հանգստյան» հոգեպարար արարողությանը:

Նորին Սրբությանը Ս. Սարգիս եկեղեցու մուտքի մոտ դիմավորեց և բարի գալուստ մաղթեց Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը: Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով և «Հրաշափառ»-ով առաջնորդվեց եկեղեցի:

Ղողանջեցին եկեղեցու զանգերը և սկսվեց Հսկումի հանդիսավոր ժամերգությունը: Սրբազան արարողության ընթացքին, հանուն Արարատյան թեմի, առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը, ողջունելով Վեհափառ Հայրապետի օրհնաբեր այցը, ասաց.

«Վեհափառ Տեր.

Քաղաքամայր Երևանի հավատացյալները այսօր առավել բազմամբոխ հավաքվել են առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցի՝ սրբազան այս հարկի տակ ողջունելու Ձերդ Սրբության շնորհաբեր այցը, որպես սիրո և երախտագիտության արտահայտություն նվիրաբերելու Ձեզ իրենց հոգու բարեպաշտ և խնկալի զգացումներից գեղահյուս մի փունջ՝ աջահամբույրներ, բարեմաղթություններ հավատավոր շրթունքներից և օրհներգություն:

Հավատացելոց այս ճոխ և յուրօրինակ աղոթքի փնջի հետ մեկտեղ աղերս ենք վերառաքում առ Աստված և մենք՝ թեմիս հոգևոր պաշտոնեությունը, թեմական և եկեղեցական մարմնի անդամների հետ, ասելով. Տեր, երկար կյանք տուր Հայրապետին, երկար օրեր Հայոց Հոր, անսասան պահիր միշտ Մայր Հայրենիքը մեր և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Վեհափառ Տեր, Մեծի պահոց լրումին Ս. Սարգիս եկեղեցի կատարած այսօրվա Ձեր այցը թեմիս հոգևոր դասի և հավատացելոց համար ունի բացառիկ նշանակություն: Ձեր ներկայությունը ուղենշում է մեր մտածումների և խոհերի ճանապարհը՝ հաղորդվելու Ձեր հավատքին, խոսքին և գործին, որոնք փառք և անմահություն բերեցին Ձեր անձին և առավել շուք ու վեհություն հայոց Հայրապետական գահին, իսկ մեզ՝ հավատացելոցս, հոգևոր կյանքի վերազարթոնք, մեր խոնարհյալ վանքերի մի նոր հառնում: Եվ ի լրումն այս ամենի լուսազգյաց և շինարար մի Հայրապետ՝ Աստվածահաճո և ազգանվեր կյանք ապրելու պայծառ մի օրինակ ամեն հայի:

Սիրելի Վեհափառ, կարծում եմ մեր հավատացյալների ցանկությունը արտահայտած կլինեմ, Ձերդ Սրբությանը խնդրանք ներկայացնելով, որ այսօրինակ այցեր Արարատյան թեմի եկեղեցիներ ավելի հաճախ լինեն: Միշտ է, հայ հավատացյալը ամենուրեք հոգևոր հաղորդակցության մեջ է Ձերդ Սրբության հետ, շնորհիվ ստեղծագործ և շինարար հայրապետիդ բազում ներդրումների մեր ժողովրդի հոգևոր, կրոնական և մշակութային կյանքի անդաստաններում, սակայն հայ հավատացյալի անմիջական մերձեցումը Հայոց Հայրապետին կենսական է իր հոգևոր կյանքի, ազգիվ նկարագրի, հայրենանվեր հոգու կերտման և արդյունավորման համար:

Հրավիրելով Ձերդ Սրբությանը բաշխելու մեզ Ամենայն Հայոց Հայրապետիդ պատգամները և հորդորները, մենք մեր ձայնն ենք բարձրացնում առ Աստված՝ մաղթելով Ձեզ երկար կյանք և արևշատ օրեր, որպեսզի Լուսավորչի կանթեղը Ձեր ձեռքում ընդ երկայն ավուրս առաջնորդեք Եկեղեցին և համայն ժողովրդին հայոց, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, դեպի լույս և խաղաղություն: «Ամեն հայի սրտից բխած լսիր այս ձայն ով Աստված» ամեն»:

Այնուհետև սրբազանը հրավիրեց Վեհափառ Հայրապետին տալու իր հայրական հորդորներն ու հայրապետական օրհնությունները հոգևոր դասին և հավատացյալ ժողովրդին.

«Հանուն Հոր և Որդվո և Հոգվույն սրբո, ամեն:

Ողջույն և Աստվածային օրհնություն ձեզ բոլորիդ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից:

Սիրելի հավատացյալներ, ես եկել եմ վերստին այստեղ՝ ձեր աղոթքի տուն, հանդիպելու ձեզ հետ աղոթքի պահին: Հոգեպես մխիթարված եմ, որ տեսնում եմ մեծ թվով հավատացյալներ այս առիթով: Վստահ եղեք, թեև հաճախ չեմ այցելում ձեր եկեղեցիները, սակայն այնտեղ՝ Էջմիածնում, միշտ իմ մտապատկերի առջև կաք տեսապես. մեր հայրապետական Արարատյան թեմը, իր եկեղեցիներով, իր թեմական առաջնորդով, հոգևոր ուխտապահ սպասավորներով և համայն ժողովրդով՝ հոգևոր հաղորդակցության մեջ: Այդպես իրականանում է նաև եկեղեցու գաղափարը, որ, ինչպես գիտեք, ոչ միայն արտաքին տեսքն է, ճարտարապետական կառուցվածքը, այլ ժողովրդի մեկտեղումը մեկ հարկի տակ նույն զգացմունքներով առ Աստված, որովհետև Աստված է և Աստծու գաղափարն է, որ իրականում միավորում է մեզ: Սփյուռքի հայությունը՝ արտասահմանի մեր հոգևոր զավակները նույնպես հարյուրավոր և հազարավոր կիլոմետրեր հեռավորության վրա են գտնվում Ս. Էջմիածնից, մեր Մայր Հայրենիքից, բայց եկեղեցվո և մեր սուրբ հավատքով մենք կազմում ենք Հայ Եկեղեցվո զավակների միասնություն՝ մեկ ազգ, մեկ ժողովուրդ, մեկ սիրտ, մեկ հոգի:

Ս. Էջմիածինը միավորում և միատեղում է համայն մեր ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Ահա ես ձեզ բերում եմ հայրական սիրո ողջույն և Աստվածային օրհնություն այն սուրբ սեղաններից: Ես բերում եմ նաև այստեղ իմ ողջույնը և գնահատանքի խոսքը ձեր թեմական առաջնորդին՝ գերաշնորհ Գարեգին եպիսկոպոսին, որ իր ողջ էությամբ նվիրված է մեր Եկեղեցուն, նվիրված է ձեզ, և տիվ ու գիշեր ջանք չի խնայում իր պարտքը կատարելու համար Աստծու առաջ, Ս. Էջմիածնի և ձեր բոլորի առաջ: Ես իմ գնահատանքի խոսքը բերում եմ նաև Արարատյան թեմի հոգևոր դասին, Արարատյան

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՔԱՐՈԶԻ ՊԱՀԻՆ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ
ՀԱՆԳՍՏՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

(3 ապրիլի 1987 թ.)

Рецензионный фонд

թեմի թեմական խորհրդին և եկեղեցական վարչությանց, գործադիր մարմինների բարեջան անդամներին, որոնք ջանք չեն խնայում, որպեսզի շեն և պայծառ մնան մեր աղոթքի տները ողջ Հայաստանում:

Սիրելի հավատացյալներ, խոսեցի պատասխանատվության մասին: Իրոք ամեն մարդ ինչ-որ պարտականություններ ունի իր կյանքի ընթացքում և՛ ընտանեկան հարկի տակ, և՛ հասարակական կյանքում, և՛ եկեղեցական-համայնքային կյանքում, և՛ աշխատանքի վայրում, և՛ իբրև քաղաքացի մեր Մայր Հայրենիքի: Կարծում եմ, ամեն գիտակից անձնավորություն աշխատում է իր կարողությանց չափով, իր հնարավորության չափով այդ պարտականությունները կատարել: Որովհետև մարդը աշխարհի վրա միակ գիտակից էակն է, որ պատասխանատու է իր արածին, իր մտածածին, իր գործին և ունի հնարավորությունը անդրադառնալու իր արածին իբրև լավ և չար, օգտակար և վնասակար: Մեծի Պահոց այս շրջանին եկեղեցին մեզ հրավիրում է ինքնաքննության, ինքնաճանաչման, ի հարկին ինքնադատության և ինքնակատարելագործման: Հիշում եք, Հիսուսի Անիրավ տնտեսի առակը հենց այդ պարտականության հետ է կապված: Տնտեսը իրեն հանձնված գործը կատարեց, որովհետև օժտված էր խելքով, ճարպիկ էր, գիտակից էր և երկար ժամանակ գործը առաջ տարավ իմաստությամբ: Երբ վերադարձավ տանուտերը, ասաց. «տուր զհաշիւ տնտեսութեան քոյ»: Տնտեսը ներկայացրեց, բայց պարզվեց, որ բոլոր անազնիվ գործերը իր սեփական օգուտի համար էր կատարել, չարաշահել էր տանուտերի վստահությունը. տանուտերը նրան պաշտոնից հեռացրեց: Այս փոքրիկ պատումը մեզ հիշեցնում է, որ կգա մի օր, երբ մեզ բոլորիս կուղղվի այս կոչը, այս հարցումը՝ «տուր քո տնտեսության հաշիվը»՝ քո կյանքի գործերի հաշիվը, քո կատարած գործերի հաշիվը: Եվ երանի այն մարդկանց, որոնք արդար գործեր են տեսել, ազնիվ աշխատանք են կատարել, հավատարիմ են մնացել իրենց տիրոջը, իրենց պարտքը կատարել են ազնվությամբ: Եթե ամեն մեկը իր պարտականության գիտակցությունը ունենա, իր արածի և չարածի կշիռը կարողանա ճիշտ չափել, կտիրի համերաշխ կյանք, խաղաղություն, մանավանդ փոխադարձ սեր: Այս բոլորին ավելացնենք մեր պարտականությունները դեպի մեր ժողովուրդը, մեր երկիրը, մեր Հայրենիքը, որը ահա վերածնդի շրջան է ապրում ավելի քան 60 տարիներ:

Ահա այս մի քանի հորդորներով ես կուզեի վերջացնել իմ խոսքը՝ կրկին իմ աղոթքը բարձրացնելով դեպի երկինք, որպեսզի Աստված նախ և առաջ հաստատուն պահի աշխարհի խաղաղությունը, որով պայմանավորված է ամեն ինչ՝ մեր կյանքը, մեր գոյատևումն իսկ այս աշխարհի վրա: Ահա այդ աշխարհի խաղաղությունն է ժողովուրդների միջև, պետությունների միջև, հատկապես մեծ պետությունների միջև համերաշխ գոյակցությունը, որ մենք ցանկանում ենք Աստծու օրհնությամբ առավել և առավել ամրապնդվի, որպեսզի մեր երկրագնդի ժողովուրդները և մեր փոքրիկ հայ ազգը այլևս անցյալի արհավիրքները և տառապանքներն ու կործանումները չտեսնի: Եվ աղոթում եմ նաև մեր Եկեղեցու անսասանության և պայծառության համար ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Քիչ առաջ ես ասացի, թե ինչպիսի պատմական առաքելություն ունի Հայաստանյայց Եկեղեցին մեր ժողովրդի կյանքում: Եվ ահա այդ առաքելությունը ես ցանկանում եմ, որ շարունակվի, իրագործվի հետզհետե առավել ազգահաստատ իրագործումներով:

Եվ վերջապես կուզեի կրկին անգամ Աստուծո օրհնությունը բերել ամենքիդ և մաղթել ձեզ բաջառողջություն հոգվո և մարմնո, ներքին հավասարակշռություն և խաղաղություն, որպեսզի ամեն մեկդ ձեր կյանքի ճանապարհին ապրեք և գործեք իբրև բարի քրիստոնյաներ և արժանավոր զավակները հայ ազգին: Վերստին աղոթենք առ Աստված մեր բոլորիս խաղաղ և ապահով, երջանիկ կյանքի համար:

Շնորհք, սեր և խաղաղություն Տեառն մերո Հիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսյանդ, ամեն»:

Հավարտ սրբազան արարողության հոգևոր դասը, թափոր կազմած, «Ամեն հայի սրտից բխած...» հայրապետական մաղթերգով ուղեկցեց Վեհափառ Հայրապետին, որը հրաժեշտ առնելով իր հոտից՝ մեկնեց Մայր Աթոռ:

ԱՎԵՏԻՍ ՔՀՆ. ԴԱՆԻԵԼՅԱՆ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Ապրիլի 26—30-ը Խորհրդային Հայաստանի մշակութային և տնտեսական կյանքին ծանոթանալու համար Հայաստանում էր գտնվում Խորհրդային Միությունում հավատարմագրված արտասահմանյան 12 երկրների լրագրողների խումբը (ԱՄՆ, Արգենտինա, Բուլղարիա, ԳԴՀ, ԳՖՀ, Լեհաստան, Կանադա, Կիպրոս, Հարավսլավիա, Հունգարիա, Շվեդիա, Ֆրանսիա):

Ապրիլի 28-ին լրագրողները եղան Մայր Աթոռ Ս. Էջմիածնում և հանդիպում ունեցան Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ: Հարցազրույցը շոշափեց Հայ Եկեղեցու այսօրվա վիճակը, կրոնական, միջեկեղեցական-էկումենիկ գործունեությունը, մասնակցությունը համաշխարհային խաղաղության համար մղվող պայքարին, Հայրենիք—Սփյուռք կապերը, 1915 թվականի հայկական ցեղասպանությունը և այլ հարցեր: Վեհափառ Հայրապետը սպառիչ և բովանդակալից պատասխաններով լրագրողներին ծանոթացրեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատմական անցյալին ու ներկային:

Այս հյուրերը այցելեցին Մայր Աթոռի թանգարան ու Գանձատուն:





ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 19-ին, կիրակի.—Զատիկ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Ամեն տարի Զատկի տոնը նշվում է ծաղկազարդ գարնանը: Կարծես բնությունն էլ իր հերթին արձագանքում է Քրիստոսի հրաշափառ Հարությանը և մարդկանց հոգիները լցնում զարթոնքի հավերժածուփ լույսով: Զատկի տոնը քրիստոնեական աշխարհի մեծագույն տոնն է:

Վաղ առավոտից Մայր տաճարը լեփ-լեցուն է հավատացյալ բազմությամբ. Զատկի տոնի առթիվ բազմաթիվ ուխտավորներ են եկել Էջմիածին քաղաքից, Երևանից և Հայաստանի տարբեր շրջաններից ու գյուղերից:

Ժամը 11-ն է: Հնչում են Մայր տաճարի ավետաբեր զանգերը՝ ի լուր ամենքի ազդարարելով Քրիստոսի հրաշափառ Հարությունը:

Վեհափառ Հայրապետը զգեստավորված, եկեղեցական թափորով, եկեղեցու զանգերի տոնական ու քաղցրահունչ ղողանջների և հոծ հավատացյալների ջերմեռանդ արտահայտությունների ներքո Վեհարանից առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու օրվա հանդիսավոր սուրբ պատարագը:

Մայր տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել հյուրաբար Մայր Աթոռում գտնվող արտասահմանից ժամանած հայ ուխտավորներ:

Զատկական ս. պատարագին ներկա են նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ս. Վարդանյանը և տեղակալ տիար Ռ. Զարգարյանը:

Ս. պատարագի հոգեպարար արարողությունն սկսվում է և հանդիսավորությամբ շարունակվում մինչև «Հայր մեր»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, հաղորդելով Քրիստոսի հրաշափառ Հարության ավետիսը, շնորհավորում է համայն հայության Զատիկը, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, ու խոսում իր ոգեշունչ քարոզը՝ նվիրված օրվա տոնին և նրա խորհրդին: Վեհափառ Հայրապետի քարոզը նույն օրը, երեկոյան ժամը 23.30-ին, ձայնասփռվեց Երևանի ռադիոկայանից (Քարոզը տես էջ 3):

Հավարտ ս. պատարագի բազում հավատացյալներ Վեհափառ Հայրապետի ձեռքից ստանում են ս. Հաղորդություն:

Սուրբ Հաղորդության շնորհաբաշխումից հետո Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան՝ իր ճանապարհին օրհնելով հավատացյալ բազմությանը:

Վեհարանում Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս օրհնում է ներկաներին Ս. Զատկի տոնի առթիվ: Ապա բոլոր ներկաները շնորհավորում են Վեհափառ Հայրապետին՝ Ս. Զատկի տոնի առթիվ, և աջահամբույրով իրենց խոնարհությունը հայտնում նրան:

Նույն օրը, ժամը 15-ին, Վեհարանի սեղանատանը տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի պաշտոնական անձինք և հյուրեր Անգլիայից, Ֆրանսիայից ու Ամերիկայի Միացյալ Նահանգներից:

Պաշտոնական ճաշկերույթին ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ս. Վարդանյանը և տեղակալ տիար Ռ. Զարգարյանը:

Ճաշկերույթի ընթացքում բոլոր ներկաները հոտնկայս բաժակ են բարձրացնում Հայոց Հայրապետի կենաց արևշատության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պայծառության ու անսասանության համար:

Զատկական ս. սեղանն ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և աղոթքով:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց». «Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:



ՀՈԳԵՎՈՐ ԽՈՀԵՐ
ՄԵԾ ՊԱՀՈՑ ԱՌԹԻՎ

Պատարագվող Գառն Աստուծո,
Վասն մարդկան ամենայնի՝
Կենդանյաց և հանգուցելոց,
Ընդ ամենայն ժամանակի:

Խունկ քաղցրաբույր աշխարհ լցնող,
Սիրո անմար վառ կրակում,
Կամուրջ՝ կապող երկինքն երկրի
Եվ ծիածան խաղաղության:

Անեծքը հին, մեր հայրերի
Սև խարանով դրոշմված,
Մեր ճակատից առհավական
Իսպա՛ռ ջնջիր քո սուրբ արյամբ:

Թեթևացրո՛ւ բեռն իմ մեղքի,
Շնորհաձիր հպմամբ ձեռքի,
Որ մաքրությամբ ներկայանամ,
Քո սուրբ տեսքին արժանանամ:

*
* *

Դո՛ւ՝ Գառն անարատ և զոհ գերագույն,
Վասն քավության թափված թանկ արյուն,
Հեղվի՛ր վերստին և սրբագործի՛ր,
Իմ ծանրածանր մեղքերը քավի՛ր:

Տե՛ր, ինձ շնորհիր վայելքն անբասիր,
Մարմնո և արյան քո հաղորդության,
Եվ պատարագվող քո զոհողությամբ
Լցվեմ հոգևին, ոգեղինանամ:

Կենարար սիրո բոցը հրդեհիր,
Անհաղորդ սրտիս խոր գավիթներում,
Փշրի՛ր սառույցը իմ մեռելության,
Հաստատիր հավատս հանդեպ մարդկության:

Դո՛ւ՝ լո՛ւյս առաջին, մա՛յր իմ գոյության,
Լո՛ւյս անծայրածիր, լո՛ւյս ճշմարտության,

Հավերժական լո՛ւյս անսահմանափակ,
Անբիծ, անսքող, անարատ, հստակ:

Բա՛ց շամանդաղը աչքիս կուրացյալ,
Նայող՝ չտեսնող, տեսնող՝ չզգացող,
Որ տեսնեմ, զգամ անիմանալին,
Հոգու աչքերով փարվեմ Էությանդ:

*
* *

Սրբերի սուրբն ես, անաղարտ, մաքուր,
Մեղավոր անձիս վերքերն ամոքիր,
Չար խորհուրդներից իմ միտքն ազատիր,
Մաքրության քողով Դու ինձ պարուրիր:

Թշնամու խոցող նետերից փրկի՛ր,
Լեզվից բամբասող ինձ հեռո՛ւ պահիր,
Անձն իմ զրպարտված Դու արդարացրո՛ւ,
Լույսն արդարության իմ մեջ փայլեցրո՛ւ:

Դարձրո՛ւ ինձ ժառանգ հոգևոր գանձին
Մեր սուրբ հայրերի առաքինության,
Բռնի՛ր իմ թևից, ոտս ուղղիր հողդողդ,
Որ չսայթաքեմ, կորչեմ անհաղորդ:

Տե՛ր, կա՞ միթե մարդ անմեղանչական,
Մեզ է հետևում մեղքն իբրև դարան,
Դո՛ւ՝ լույս անստվեր, անբիծ, անխափան,
Եվ Քո մոտ չկա նշույլ թերության:

*
* *

Աղոթում եմ Քեզ, վասն մեր նեղչի,
Նենգ դարանակալ, չար ախոյանի,
Որ հաճախ է դեմքն իր բացահայտում,
Եղբայրների մեջ խռովք հարուցում:

Տե՛ր, օժտի՛ր բոլորիս միաբանությամբ,
Լցրո՛ւ մեր սրտերն Քո զոհողությամբ,
Թույլ մի տուր հանկարծ սայթաքենք, ընկնենք,
Եվ կորչենք հավետ քեզնից անժառանգ:

Տո՛ւր մեզ, Տե՛ր, սիրույդ՝ բաժակն քաղցրության,
Համեմիր շրթներն մեր իմաստությամբ,
Խոսքիդ զորության շնչով տոգորիր,
Քո անշեջ սիրո բոցով մեզ թրծիր:

Դարավոր վանքի կամարների տակ,
Մեր նախնյաց ուխտին բոլորով գիտակ,
Ժառանգորդն արա շնորհացդ անպարփակ,
Որ հասնենք պսակիդ՝ ուխտով անսայթաք:

ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ

ԾԱՂԿԵՊՍԱԿԻ ԶԵՏԵՂՈՒՄ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ



ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԵԼԻՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Շուրջ 72 տարի է անցել մեր դարի առաջին մեծ ոճրագործության թվականից՝ Հայկական ցեղասպանությունից: 72 տարի առաջ էր, որ թուրք արյունարբու դահճապետերը մարդկության ճակատին հավերժորեն դրոշմեցին մի սև խարան, որը նողկանք ու սարսափ է պատճառում այն մտաբերող յուրաքանչյուր ողջամիտ մարդու: Տարեց-տարի հնացող, սակայն երբեք չսպիացող հայ ժողովրդի այս վերքը առ այսօր, յուրաքանչյուր ապրիլ 24-ին, թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում բազմամիլիոն հայորդիների քայլերն է ուղղում դեպի անմահ զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանները՝ գլուխ խոնարհելու և իրենց հարգանքի տուրքը մատուցելու մոտ երկու միլիոն անմեղ զոհերի հիշատակի առաջ: Սակայն, սգո թափորներ լինելով հանդերձ, դրանք վերածնված գոյատևման ուժի, ստեղծագործական կամքի, միասնության ու հավերժելու հաղթերթներ են: Այո՛, չիրականացան թուրք ազգայնամոլների ծրագրերը, քանի որ, շնորհիվ Սարդարապատի հերոսամարտի ու 1920 թ. Նոյեմբերի 29-ի պայծառ լուսաբացի, այսօր կա, ապրում և ստեղծագործում է հայ ժողովուրդը թե՛ իր վերածնված Մայր Հայրենիքում և թե՛ Սփյուռքի տարածքի վրա:

Այսօր, ապրիլի 24-ին, ժամը 11.00-ին, Մայր Աթոռի միաբանությունը, գլխավորությամբ ազգընտիր Նորին Սուրբ Օծություն Վեհափառ Հայրապետի, այցելեց Ծիծեռնակաբերդ և Եղեռնի զոհերի հիշատակին ծաղկեպսակ դրեց հուշարձանին: Հավերժական կրակի շուրջ երգվեց հոգեհանգստյան «Ի վերին Երուսաղէմ» շարականը, որից հետո Վեհափառ Հայրապետը «Հոգւոց» արտասանեց նահատակների հիշատակին:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանն ու տեղակալներ Անդրանիկ Հասրաթյանն ու Ռաֆիկ Զարգարյանը:

Նույն օրը, ժամը 11.00-ին, Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Աբել աբեղա Օղլուգյանը: «Հայր մեր»-ից առաջ օրվա առթիվ քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը.

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն:

«Անհաւասիկ ես ածից ի վերայ ձեր շունչ կենդանի» (Եզեկ. ԻԷ 5):

«Անհավասիկ ես ձեզ տալու եմ շունչը կենդանի»:

Եզեկիել մարգարեն իր ժողովրդի ամենադժբախտ, տառապալից օրերին, ի տես նրանց նահատակության, ունենում է ի վերուստ իրեն շնորհված հետևյալ տեսիլքը, որի ընթացքում Աստված, բռնելով մար-

գարեի ձեռքից, տանում է նրան դաշտ, ուր բյուրավոր նահատակների չորացած ոսկորներով լցված մի տարածություն կար: Աստված Եզեկիելին ցույց է տալիս նահատակների ոսկորները, ասելով նրան. «Մարգարեացի՛ր և կյա՛նք պարգևիր այս չորացած ոսկորներին»: Մարգարեն զարմացած նայում է Աստծուն. նրա պաղատալից ակնարկի մեջ կար այն միտքը, թե միայն ինքը՝ Աստված կարող է հարությունն շունչ և կյանք պարգևել այդ ոսկորներին: Քիչ անց մարգարեանում է Եզեկիելը, և կամաց-կամաց դաշտի մեջ գտնվող այդ չորացած ոսկորները շարժվում, իրար են մոտենում և մկաններ, միս, մորթ են ստանում: Աստված ասում է Եզեկիելին. «Ծո՛ւնչ տուր նրանց»: Եզեկիելը կրկին Աստծուն պաղատում է ասելով, որ այդ բյուրավոր նահատակներին միայն Աստված կարող է տալ իր շունչը կենդանի: Եվ ահա ամբողջ դաշտի տարածքում ընկած բյուրավոր մարդիկ շունչ և հոգի ստացած՝ շարժվում և ապրում են:

Սիրելի հավատացյալներ, մենք հավաքվել ենք այսօր այս սուրբ տաճարի կամարների տակ՝ ոգեկոչելու հիշատակը Մեծ Եղեռնի մեր նահատակների: Այսօր ապրիլի 24-ն է: 1915 թվականից ի վեր ամեն մի հայ, աշխարհի որ անկյունում էլ գտնվելիս լինի, անպայման մի պահ անդրադառնում է իր նահատակներին, որպես արյունակից եղբայր ու հարազատ պանծացնում է նրանց հիշատակը վերհիշելով նրանց գործունեությունը, նրանց զոհողությունները, նրանց հայրենասիրությունը և վասն Եկեղեցվո ու վասն հավատի թափած նրանց արյունը:

1876 թվականին, երբ Սուլթան Համիդ գահ բարձրացավ, սկսեց դաժան ու անզիջող քաղաքականություն վարել Թուրքիո մեջ ապրող ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Թուրքիան այն ժամանակ Օսմանյան մեծ կայսրություն էր, և արաբական աշխարհը ևս նրա գերիշխանության տակ էր գտնվում: Նա ոչ միայն իր կայսրության սահմաններում ապրող քրիստոնյա ժողովուրդներին, այլ նաև արաբ ժողովրդին մեծ վնաս հասցրեց իր կազմակերպած հալածանքներով և ջարդերով: Բայց նա հատկապես ատելությամբ էր լցված հայ ժողովրդի դեմ, որովհետև վեց հարյուր տարիներ շարունակ Օսմանյան լծի տակ հեծող հայ ժողովուրդը փայփայում էր մի ազնիվ երազ, մի ազնիվ իղձ՝ ունենալ իր ազատ հայրենիքը, կերտել իր ապագան իր իսկ ձեռքով, իր իսկ տաղանդով և պահել իր ազգային յուրահատուկ մշակույթը: Սուլթան Համիդի համար հաճելի չէր այդ բոլորը: Եվ կամաց-կամաց, երբ Օսմանյան կայսրությունը փոքրանում-կծկվում էր, և կայսրության շրջակա երկրների ժողովուրդները իրենց ազատությունն էին ձեռք բերում, Համիդը ավելի դաժան ու վայրագ էր դառնում: Ուզում էր հայերի հարցը վերջնականապես լուծել: Այս պատճառով 1895—1896 թվականներին հսկայական ջարդեր կազմակերպեց հայկական գավառների մեջ, ուր բյուրավոր հայեր նահատակվեցին: Ավելի ուշ, 1908 թվականին, Ադանայի մեծ ջարդը տեղի ունեցավ, կրկին անգամ տասնյակ հազարավոր հայերի անմեղ արյունն էր թափվում Կիլիկիայում: Սուլթանական լուծը տապալող Իթթիհատական կուսակցությունը, որ 1908 թվականին իշխանությունն իր ձեռքն էր վերցրել, խղճի ազատության, արդարության և եղբայրության կոչերով էր հանդես գալիս և խոստանում համահավասար իրավունքներ տալ բոլոր փոքրամասնություններին: Սակայն նրանք ևս, ազգայնամոլ զգացումներով կուրացած, դավադիր դուրս եկան և, ինչպես սուլթանը, նրանք ևս սկսեցին փոքրամասնությանց դեմ գաղտնի դավեր նյութել և կոտորածներ կազմակերպել: Այսպիսով, երբ Թուրքիան ներգրավվեց առաջին համաշխարհային պատերազմի մեջ, հայերին զանգվածաբար տեղափոխեց դեպի կենտրոնական Անատոլու, իբր թե առաջն առնելու համար հայերի ռուսական կողմնորոշման վտանգի և ապահով կարողանալ կռվելու համար Դարդանելի եզերքում միացյալ ուժերի դեմ: 1915 թվականից մինչև 1918 թվականը հայերը բռնի գաղթի ենթարկվեցին, աքսորվեցին դեպի անապատներ, դեպի ամայի տարածություններ: Եվ այդ աքսորի ճանապարհին անոթի՝ ընկան և մեռան: Այն, ինչ չէին կարողանում անել սովն ու կիզիչ անապատները, լրացնում էին մարդկային ոճրագործ մտքի անսպառ երևակայությամբ, կանխամտածված և մշակված ոճիրներով: Այս ձևով մոտավորապես մեկուկես միլիոն հայ ոչնչացրեցին իթթիհատականները: Մեկ ու կես միլիոն և ավելի հայեր անխնա կերպով կոտորվեցին կենտրոնական Թուրքիո մեջ և Սիրիայի անապատներում:

Քիչ առաջ, մեր ամբողջ ժողովրդի հետ, մենք ևս Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ գնացինք ուխտի Ապրիլյան հուշակոթողին՝ Ծիծեռնակաբերդ՝ այնտեղ մեր սրտի պարտքը կատարելու, դնելու համար հուշարձանի առջև մեր ծաղիկները և աղոթելու մեր նահա-

«ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ»

տակների հոգիների համար: Այնտեղ մենք աղոթեցինք արտեռանդն, որ Աստված ընդունց հոգիները լուսավորի, նաև պարգևի նրանց իրականացած իդեալների ավելի պայծառացում: Նրանց երազը, սիրելի հավատացյալներ, հայրենիք ունենալն էր: 1918 թվականին հայերը Արևելյան Հայաստանում, Սարդարապատի ճակատամարտում կարողացան կազմակերպված կերպով թրքական հրոսակների առջև ելնել և հաղթանակ տանել՝ նրանց վտարելով Հայաստանի սահմաններից: Սակայն Հայաստանը իր վերջնական ապահովությունը գտավ մասնավորապես, երբ 1920 թվականի նոյեմբերին մեր մեծ եղբայր ռուս ժողովուրդը իր ձեռքը երկարեց մեզ՝ պաշտպան կանգնելով մեր հողերին, մեր իրավունքներին և մեր մշակույթին: Այդ օրվանից մինչև այսօր, սիրելի հավատացյալներ, եթե չհաշվենք երկրորդ համաշխարհային պատերազմը, մեր հայրենի հողի վրա թշնամու ոտք չի կոխել: Մենք փառք ենք տալիս Աստծուն այդ բանի համար:

Այսօր, սակայն, երբ մենք հավաքված ենք Ապրիլյան մեր նահատակների հիշատակը կրկին անգամ ոգեկոչելու, այդ հիշատակով ապրելու, պետք է այս սրբազան վայրում մեր երիտասարդությունը և մեր ժողովուրդը ուխտ կնքի՝ տեր մնալու այն ժառանգության, որ մեր նահատակները մեզ թողեցին. մեր Հայրենիքը, մեր Եկեղեցին, մեր պատմական հավատը, Ս. Էջմիածինը և հայրենի սրբազան հողը, որի վրա այնքան նահատակների արյուն է թափվել, որ այդ հողը այսօր սրբացած ու մաքրված է և մեզ համար ամենաթանկագին բանն է աշխարհի վրա:

Սիրելի հավատացյալներ, քիչ հետո Էջմիածնի շրջափակում կանգնեցված Ապրիլյան եղեռնի հուշարձանի առջև միասին հոգեհանգստյան պաշտոնի պիտի մասնակցենք: Այդ առիթով արտեռանդն աղոթենք նրանց հոգիների համար: Եվ մանավանդ աղոթենք, որ Աստված մեր հայրենիքը պահի խաղաղության մեջ, շինության մեջ և մեր ժողովրդի քրտինքը արդյունավորվի, պտղաբերի վասն խաղաղության ամենայն աշխարհի և վասն եղբայրության հանուր մարդկության և մեր վսեմ իդեալների իրականացման: Թող մեր նահատակների հոգին այսօր մեր մեջ իջնի, մեզ վերանորոգի, մեզ խթանի մեր ծառայության՝ մեր սիրո և հայրենասիրության մեջ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն»:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: Ս. պատարագին և Մեծ Եղեռնի ոգեկոչման արարողությանը ներկա էին նաև Մայր Աթոռի ողջ միաբանությունը, աշխատավորները, սփյուռքահայ հյուրեր ու հավատացյալների հոծ բազմություն:

Ս. պատարագի ավարտից հետո եկեղեցական թափորն առաջնորդվեց մայրավանքի հյուսիսային կողմում կառուցված Նահատակաց հուշարձան, ուր կատարվեց հոգեհանգստյան արարողություն: Արարողությունը նախագահում էր Վեհափառ հայրապետը:

*
* *

Նույն օրը, ժամը 15.00-ին, Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի ուսանողությունը այցելեց Ծիծեռնակաբերդ և թարմ ծաղիկներ զետեղեց Նահատակաց հուշարձանին:





ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԲԱՐԵԽՆԱՄ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՉԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ 35-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամերիկայի Միացեալ Նահանգաց արևմըտեան թեմի թեմական խորհուրդի գեղեցիկ գաղափարով և որոշումով, թեմիս երեք շրջաններէն ներս ս. պատարագի մատուցմամբ, պաշտօնական ճաշկերոյթներով և պատշաճ յայտագրերով տօնախըմբուեցաւ արևմտեան թեմի բարեխնամ առաջնորդ գերշ. Տ. Վաչէ արքեպս. Յովսէփեանի ձեռնադրութեան 35-ամեակը:

Հարաւային Գալիֆորնիոյ մէջ տօնախըմբութիւնը տեղի ունեցաւ շաբաթ երեկոյ, յունուար 24-ին, 1987, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ Աղաճանեան սրահին մէջ: Առաջնորդ ս. հայրը եկեղեցական հայրերու մեծ թափորով առաջնորդուեցաւ դէպի սրահ, ուր շուրջ 600 հիւրեր գրաւած էին իրենց սեղանները:

Բարեբաստիկ այս առիթով հիւրաբար արևելեան թեմէն ներկայ էին առաջնորդ գերշ. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկեան և Թեմական խորհուրդի անդամներ :

Յոբելինական այս հանդիսութեան ներկայ էին դատաւորներ, պետական անձնաւորութիւններ և խմբագիրներ: Նահանգային ծերակուտական Ուիլեըմ Քէմպըլ շնորհաւորական իր խօսքը ըսելէ ետք, Գալիֆորնիոյ ծերակոյտի կողմէ յատուկ գնահատական բանաձև մը յանձնեց սրբազան հօր:

Օրուան գլխաւոր խօսողն էր արևելեան թեմի առաջնորդ գերշ. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկեան: Սրբազան հայրը հանգամանօրէն խօսեցաւ թեմիս առաջնորդ ս. հօր նուիրեալ կեանքին և գիտակից ու կարող ղեկավարութեան մասին՝ ուսանողական օրերէն մինչև առաջնորդութեան պաշտօնը արևմտեան թեմի:

Հոգշ. Տ. Մուշեղ վրդ. Թաշճեան, հովիւը Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ, կարդաց սրբազան հօր քահանայական ձեռնադրութեան 35-ամեակի առթիւ Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմէ ղրկուած օրհնութեան կոնդակը:

35-ամեակի առթիւ պատրաստուած էր ս. հօր գործունէութեանց կարևոր հանգրուանները ներկայացնող պատկերազարդ գեղեցիկ գրքոյկ մը, որուն մէջ տպուած էր Վեհափառ Հայրապետի կողմէ ղրկուած կոնդակը, ինչպէս նաև կային խնդակցութեան և շնորհաւորական գրութիւններ:

Օրհնութեան աղօթքով փակուեցաւ այս յիշատակելի և բացառիկ ձեռնարկը: Իսկ

յոբելինական հանդիսաւոր ս. պատարագը առաջնորդ ս. հայրը մատոյց կիրակի, յունուար 25-ին, 1987, Վէն Նայտի Ս. Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ՝ մասնակցութեամբ Հարաւային Գալիֆորնիոյ հոգևոր հայրերու:

Կեդրոնական Գալիֆորնիոյ շրջանին մէջ ս. հօր քահանայական ձեռնադրութեան 35-ամեակի տօնախմբութիւնը կատարուեցաւ Ֆրէզնոյի Ս. Պողոս եկեղեցւոյ մէջ, կիրակի, փետրուար 1-ին, 1987: Յոբելինական ս. պատարագը մատոյց առաջնորդ ս. հայրը՝ մասնակցութեամբ շրջանի հովիւներուն:

Յաւարտ եկեղեցական արարողութեանց, Պէրպէրեան սրահին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական ճաշկերոյթ մը: Աւելի քան 400 հիւրեր ներկայ գտնուեցան այս ձեռնարկին և շնորհաւորեցին սրբազան հայրը:

Արժ. Տ. Շահէ աւագ քհն. Այթունեան հայերէնով և արժ. Տ. Գէորգ քհն. Առաքելեան՝ անգլերէնով կարդացին Վեհափառ Հայրապետի կողմէ ղրկուած օրհնութեան կոնդակը: Ապա խօսք առաւ թեմական խորհուրդի ատենապետ տիար Բաղրատ Պարսամ և շնորհաւորեց առաջնորդ ս. հայրը և նշեց նորին սրբազնութեան շրջանին թեմէն ներս կատարած իրագործումները:

Յոբելինական հանդիսութիւնը վերջ գըտաւ առաջնորդ ս. հօր փակման պատշաճ խօսքով և օրհնութեան աղօթքով:

Հիւսիսային Գալիֆորնիոյ շրջանին մէջ տօնախմբութիւնը տեղի ունեցաւ կիրակի, փետրուար 8-ին, 1987, Օգլընտի Ս. Վարդան Հայց. Եկեղեցւոյ մէջ: Առաւօտուն ս. պատարագ մատոյց առաջնորդ ս. հայրը՝ մասնակցութեամբ շրջանին հովիւներուն:

Իսկ պաշտօնական ճաշկերոյթը տեղի ունեցաւ յաւարտ ս. պատարագի՝ եկեղեցւոյ սրահին մէջ: Ծովածոցի շրջանի հաւատացեալները համախմբուած էին իրենց յարգանքը մատուցանելու համար սիրելի առաջնորդ սրբազան հօր:

Երաժշտական յայտագրի աւարտին գերշ. Տ. Արիս եպս. Ծիրվանեան պաշտօնապէս ներկայացուց յոբելեար ս. հայրը, որը իր կարգին խօսեցաւ յուզիչ և ներշնչող ճառ մը: Սրբազան հայրը արտայայտեց իր բացարձակ և հաստատուն հաւատարմութիւնը Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդէպ և կոչ ուղղեց արևմտեան թեմի հաւատացեալներուն և աշխարհի համայն հայութեան, որ որևէ ատեն սակարկութեան տակ չդնեն իրենց սկզբունքները, սէրն ու հաւատարմութիւնը հանդէպ Հայց. Եկեղեցւոյ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, որ մեզ պահած ու պահպանած է անցեալի և ներկայի բոլոր փոթորիկներու և վտանգներու դէմ:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Հոլիվուտ,
2 մարտ 1987 թ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մարտի 29-ին, կիրակի.—Ե կիրակի Քառասնորդական Պահոց (Դատաւորին):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Կոմիտաս աբեղա Հովնանյանը՝ «Պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս եւ մի ձանձրանալ» (Ղուկ. ԺԸ 1) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Ապրիլի 4-ին, շաբաթ.—Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն:

Այսօր Մայր տաճարում, Իշման ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Օշական աբեղա Գյուլգյուլյանը:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, տեղի ունեցավ գրական երեկո, նվիրված հայ մեծանուն գրող Վիլյամ Սարոյանի հիշատակին: Երեկոյի ընթացքում ամերիկահայ հայագետ, պրոֆեսոր պրն. Տիգրան Գույումճյանը ներկաներին պատմեց գրողի կյանքից հետաքրքրաշարժ դրվագներ, ցուցադրվեցին լուսապատկերներ:

Գրական երեկոյին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը:

Գրական երեկոյին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Ապրիլի 5-ին, կիրակի.—Զ կիրակի Քառասնորդական Պահոց (Գալստեան):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել քհն. Կյուրեղյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Օշական աբեղա Գյուլգյուլյանը՝ «Վասն աւուրն այնորիկ եւ ժամու ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք յերկինս եւ ոչ Որդի, բայց միայն Հայր: ...Արդ արթուն կացէք, զի ոչ գիտէք երբ տէր տանն գայցէ» (Մարկ. ԺԳ 32, 35) բնաբանով:

*
* *

Ապրիլի 7-ին, երեքշաբթի.—Աւետումն Ս. Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավագ քհն. Բաղրամյանը:

*
* *

Ապրիլի 8-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հավաքույթ:

*
* *

Ապրիլի 12-ին, կիրակի.—Ծաղկազարդ: Պահք:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ծվեդիայի հայոց հոգևոր տեսուչ գերաշնորհ Տ. Արսեն եպս. Բերբերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Գրեալ է, Տուն իմ տուն աղօթից կոչեսցի, եւ դուք արարէք զդա այր աւազակաց» (Մատթ. ԻԱ 13) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Ապրիլի 16-ին, հինգշաբթի.—Աւագ հինգշաբթի: Պահք: Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, «միջօրէի» ս. պատարագ մատուցեց Տ. Պարգև աբեղա Մարտիրոսյանը:

Ս. պատարագի ընթացքում, «Հայր մեր»-ից առաջ, պատարագիչ հայր սուրբը ընթերցեց Ս. Բարսեղ Հայրապետի մեծ ճառը:

Երեկոյան ժամը 17.30-ին Մայր տաճարում կատարվեց «Ոտնլուայ»-ի կարգը՝ Մայր Աթոռի դիվանապետ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի հանդիսադրությամբ:

Հանդիսավոր արարողությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան ժամը 19.30-ին «ի գիշերի հսկումն» կատարվեց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

«Փառք ի բարձունս»-ից հետո քարոզ խոսեց Տ. Աբել աբեղա Օղլուգյանը՝ «Էլի, Էլի, լամա սաբաքթանի» (Մատթ. ԻԷ 46) բնաբանով (տես էջ 41):

*
* *

Ապրիլի 17-ին, ուրբաթ.—Աւագ ուրբաթ: Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր, ժամը 11.30-ին, Մայր տաճարում կատարվեց «Կարգ խաչելութեան» արարողությունը:

Երեկոյան ժամը 18.30-ին, հանդիսադրությամբ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, կատարվեց «Կարգ թաղման» արարողությունը:

*
* *

Ապրիլի 18-ին, շաբաթ.—Աւագ շաբաթ: Պահք: Ճրագալոյց Զատկի:

Այսօր, ժամը 18-ին, Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Պատարագի ընթացքում հանդիսավորությամբ հնչեց Հարության մեծ ավետիսը՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

«Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց պատարագիչ սրբազան հայրը՝ «Զի խնդրէք զկենդանին ընդ մեռեալս, չէ աստ քանզի յարեաւ» (Ղուկ. ԻԴ 5—6) բնաբանով (տես էջ 37):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Օրվա հանդիսավոր արարողությունից հետո, ժամը 18.30-ին, վանական սեղանատանը Մայր Աթոռի միաբանները և հոգևոր ճեմարանի ուսանողությունը ճաշակեցին Զատկի նավակատիքի ընթրիքը:

*
* *

Ապրիլի 20-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավագ. քհն. Բաղրամյանը:

*
* *

Ապրիլի 26-ին, կիրակի.—Կրկնազատիկ (Նոր կիրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս աբեղա Հովնանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից» (Մատթ. Ե 10) բնաբանով (տես էջ 39):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Դիվանը այսու լիազորված է ծանուցելու ի գիտություն Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռներին և ազգային-եկեղեցական մարմիններին, որ Ամենայն Հայոց Հայրապետի վճռով կարգալույծ է արված Էջմիածին քաղաքի Ս. Գայանե վանքի ծիսակատար քահանա Տ. Նշան Բեյլերյանը, որը, դրժելով իր ծառայության ուխտը և լքելով իրեն վստահված հոտը, առանց հարգելի պատճառի և առանց եկեղեցական իշխանությանց արտոնության մեկնել է արտասահման:

Վերոհիշյալ կարգալույծ քահանան դասվում է աշխարհականների շարքը իր նախկին Նշան Բեյլերյան անունով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
14 ապրիլ 1987 թ.



ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԶԱՎԵՆ ԱՐՔԵՊՍ. ՉԻՆՉԻՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (8 մարտի 1987 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Թշնամի իմն եղէ ձեզ, զի ստոյգն խօսեցայ» (Գաղ. Դ 16):

«Ավետարանը ձեզի քարոզելուս, պատմելուս համար ձեզի հակառակորդ, թշնամի նկատվեցա», կըսե Պողոս առաքյալ:

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ, Մեծ պահոց կիրակիները գեղեցկորեն ընդելուզված են իրարու՝ հետզհետե իրենց տրամաբանական ավարտին հանգելու և այդ շրջանին հոգեպես պատրաստված հավատացյալները հասցնելու համար Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի հրաշալի Հարության տոնին: Եկեղեցվո եռամեծ հայրապետները Մեծ պահոց այս շրջանը հատկապես հաստատած են, որպեսզի հավատացյալները հոգևոր պատրաստությամբ, զղջումով և ապաշխարությամբ առ Աստված դառնան: Այդ շրջանին եկեղեցվո սրբապատկերները, խորանը (որ կխորհրդանշե երկինքը և երկնային ողորմությունը) կծածկվին, որպեսզի Ս. Զատկի նախօրյակին վերաբացվին, և երկնքի առատ ողորմությունը բաշխվի հավատացյալներուն: Այս շրջանին կկարդացվին աղոթքները, ինչպես Արևագալի ժամերգության, Ճաշու ժամու, Խաղաղական, Հանգըստյան արարողությունների ատեն:

Պահեցողությունը Աստված ինքը հաստատեց. «Որ զօրէնս սրբութեան պահոց նախ ի դրախտին հաստատեցէր»: Ցայսօր կարդացված շարականի հեղինակը կըսե. «Ով Տեր, պահեցողության օրենքը կամ սրբության այդ օրենքը դուն նախ դրախտին մեջը հաստատեցիր»:

Մեծ պահոց կիրակիները կհիշատակվին հաջորդաբար: Անցյալ կիրակի Բուն Բարեկենդան էր, այս կիրակի՝ Արտաքսման. և այսպես հետզհետե կհիշատակվին Անառակին, Տնտեսին, Դատավորին, Գալըստյան, Ծաղկազարդի և Զատկի կիրակիները: Արտաքսման կիրակի օրը կնշվի հիշատակը մեր նախածնողքին դրախտեն արտաքսվելուն: Անոնք երկնային դրախտին մեջ հաստատված՝ կապրեին երանական վիճակի մը մեջ: Աստված պատվիրած էր իրենց չմոտենալ արգիլված պտուղին: Բայց անոնք մտիկ չընին Աստուծո պատվիրանին, մեղանչեցին և արտաքսվեցան դրախտեն: Եվ ո՞վ չի գիտեր, թե մեղքին թոշակը մահն է: Այսպիսով մեր նախածնողքին միջոցավ մահը այս աշխարհ մըտավ:

Ադամեն ետքը Հիսուս Քրիստոս եկավ աշխարհ՝ մահը վերուցնելու համար: Ադամով մահը աշխարհ մտավ, Քրիստոսով մահը աշխարհեն վերցվեցավ: Ահա այս մեծ դասն է, այս պատգամն է, որ Ար-

տաքման կիրակին ավետարանական ընթերցմամբ կբերե ի սիրտ և հունկն հավատացելոց:

Սիրելի եղբայրներ և քույրեր, Աստված սեր է և ճշմարտություն: Ամեն ոք, ամեն հավատացյալ պարտի հետևիլ այս ճշմարտության: Ո՞վ չի գիտեր, թե ֆիզիկական կյանքի մեջ վախը ինչ է. անծանոթին երկյուղն է, բայց հոգևոր կյանքին մեջ ադիկա Աստուծո պատվիրաններեն հեռանալ կնշանակե: Մենք ոչ թե Աստուծո պատվիրաններեն կխուսափինք, այլ այն ցավեն, որ գինն է ճշմարտության: Իմ այս խոսքերը կուզեմ օրինակներով բացատրել: Կպատահի, որ մեզմե որևէ մեկուն ատամը ցավի և պետք ունենա զայն քաշել տալու: Նախ կվարանի, վասնզի պիտի ցավի: Բայց ատամը քաշելեն ետքը անոր բարերար ազդեցությունը պիտի զգա: Անանկ ալ մեր մեջ չարություն, անպիտանություն, հոգի միտումներ, քեն, ոխ, ատելություն, նախանձ, որկրամոլություն, բղջախոհություն արմատ արձակած են, նույնիսկ մեր բնության մաս կազմած են: Զանոնք արմատախիլ ընել, մեզմե ի բաց վանել՝ ցավ կպատճառե, հետևողական աշխատանք կպահանջե: Շատ մարդիկ կան, որոնք ֆիզիկական աղտեղության մեջ կապրին: Եվ ինչպես որ ֆիզիկական աղտեղության մեջ ապրող մարդիկ կան, այնպես ալ շատ է թիվը անոնց, որոնք հոգեկան աղտեղության, այսինքն մեղքի կյանքին մեջ կշարունակեն ապրիլ: Աստված կատարյալ է և չի հանդուրժեր անկատարության: Եթե ան մեր մեղքերուն վերաբերմամբ ազատամիտ ըլլար, այս աշխարհ պիտի չգար մարմնանալու, մարդանալու և զմեզ փրկելու համար: Եվ արդեն առ ոտս խաչին կեցողները աղաղակեցին և ըսին. «Իջցէ ի խաչէ յայդմանէ, և հաւատասցուք դմա» («Թող իջնե այդ խաչեն, որպեսզի հավատանք ադոր»): Որովհետև անոնք փրկիչ մը չէին ուզեր, այլ ուսուցիչ մը, այսինքն կուզեին իրենց մեղքերուն մեջ մնալ, հարատևել, որովհետև արդարացման ճանապարհին մեջ մտնելը ճիգ, ջանք, աշխատանք կպահանջե: Գիտակցիլ, զգալ մեղավոր ըլլալը և ուզել անկե դուրս գալ՝ կնշանակե արդեն արդարության մեջ մըտնել, իսկ գիտնալ ճշմարտությունը, գիտնալ արդարությունը, գիտնալ սրբությունը և հեգնել ու արհամարհել զայն՝ սատանայական է:

Կարճ պատմությամբ ուժեղ և ուսանելի օրինակ մը կուտա Ավետարանը և կըսե. Օր մը երիտասարդ մը ներկայացավ Հիսուսի և ըսավ. «Բարի Վարդապետ, ի՞նչ պետք է ընեմ, որ երկնքի արքայությունը ժառանգեմ»: Հիսուս պատասխանեց. «Ինչո՞ւ ինձ բարի կըսես, որովհետև Աստված է միայն բարի», այսինքն՝ իմ բարությունս աստվածային է: Եվ որովհետև, կհավելու Ավետարանը, այս երիտասարդը հազարավոր թելերով՝ հոգի ցանկություններով, հարստությամբ և այլն, աշխարհին կապված էր, չկրցավ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ետևեն երթալ:

Այս աշխարհի ծանրությունները մեզ ներքև կքաշեն: Ճշմարտությունը խոստովանիլ՝ ցավ պատճառող է, դատապարտող է: Երբ որ Պողոս առաքյալ Ավետարանը քարոզեց, ըսավ. «Զեզի ճշմարտությունը խոսեցա և ադոր համար ձեզի հակառակորդ եղա, ձեզի թշնամի եղա»: Մարդիկ չեն ուզեր ճշմարտության դեմ-հանդիման գալ. ադիկա ցավցնող է, որովհետև կպարտադրե իրենց հոգի ընթացքը փոխել և, բնականաբար, ճիգ, ջանք, աշխատանք, հարատևության ոգի կպահանջե: Մարդիկ չեն սիրեր ճշմրտությունը, երբ կիմանան, թե իրենց մեղքերը ծանոթ են այլոց: Անարդար մարդիկ կհեգնեն, կծաղրեն բարիները, վասնզի բարին չար մարդոց հերքումն իսկ է:

Դարձյալ Ավետարանեն հիանալի օրինակ մըն է Հերովդես թագավորի պատմությունը: Երբ որ մարգարեներու վերջինը և առաքյալներու առաջինը՝ Հովհաննես Մը մըրտիչ, Հերովդեսի պալատը կանչվեցավ որպեսզի այնտեղ քարոզե, ան շատ կարճ, բայց ցնցիչ կերպով մատնացույց ըրավ թագավորը և ըսավ. «Արդար չէ, բնավ ճիշտ չէ, որ եղբորդ կնոջ հետ կենակցիս»: Եվ նույն հետևյալ շաբաթներու մեջ դրվեցավ և ապա գլխատվեցավ: Չարերը չեն կրնար հանդուրժել բարիներուն և ուրեմն կուզեն զանոնք մեջտեղեն վերցնել: Ճիշտ ինչպես ավազակները, որոնք կգործեն մութին մեջ և չեն ախորժիր, որ քընինչներու լուսարձակները իրենց վրա բացվին: Երբ գորշ գույնով գավաթի մը մեջ քիչ ջուր դնենք և նայինք, կտեսնենք, որ ջուրը գորշ կերևի, բայց գիտենք, որ այդպես չէ: Երբ Աստուծո ողորմությունը, Աստուծո անսահման բարությունը, Աստուծո ճաշմարտությունը մեղավոր մարդերուն մարմնին մեջ մտնե, կփոխակերպվի ըստ մեղավորներու և կդառնա վրիժառություն:

Սիրելի հավատացյալներ, անհրաժեշտ է մեր մեղանչումներեն դուրս գալ, հոգի սովորություններն ու վարժությունները ի բաց վանել: Մեծ պահոց քառասնօրյա այս շրջանը հաստատված է հատկապես ինքնաքննության, զիղջի, ապաշխարության և

առ Աստված դառնալու համար: Պատմության ընթացքին ճշմարտությունը մեկ անգամ անձնավորվեցավ, և ադիկա եղավ այն ատեն, երբ Հիսուս ըսավ. «Ես եմ ճշմարտություն և կյանք»: Հայնմհետե դադրեցավ ճշմարտություն ըլլալե և դարձավ կրոնական, փիլիսոփայական դրություն, կյանքը ապրելու եղանակ, կյանքը ապրելու կերպ: Եվ ասոր համար չէ՞, որ կըսե Հիսուս. «Որ ունիցի ունկն լսելոյ, լուիցէ» («Ով որ ականջ ունի լսելու, թող լսե»), «և որ լսէ զբանս իմ, եկեսցէ զկնի իմ» («և ով որ կլսե իմ խոսքերս, իմ ետևես պետք է որ գա»): Դյուրին է բոլորիս համար երևակայել սարալանջին վրա կամ հովիտին մեջ արածող ոչխարներու հոտը: Կպատահի, որ անոնցմե ոչխար մը կամ գառնուկ մը ջրախառն փոսի մը մեջ իյնա: Այնտեղ կմայլե, որպեսզի հովիվը գա և զինքը այդտեղեն դուրս հանե, որովհետև այդ ցեխաջուրը գառնուկին տեղը չէ: Եվ իրոք հովիվը կուգա վերցնելու զա ն: Մենք ալ՝ բանավոր էակներս, երբեմն մեր գործած հանցանքներուն, մեղքերուն, թերություններուն, վրիպումներուն բացառ փոսերուն մեջ կիյնանք: Մեր Փրկիչը միայն, իբրև հովիվ, իր ձեռքը կերկարե՝ մեզ մեր մեղքերուն մեռելութենեն դուրս հանելու և արդարության աստիճաններեն սանդղամատ առ սանդղամատ առ Աստված բարձրացնելու համար: Բայց մենք՝ մարդկային արարածներս, միշտ ինքզինքնիս կարդարացնենք կամ արդարացնելու կերպ մը կգտնենք առ այն, որ, այո, մեր թերությունները, ապիկարությունները, մեղքերը, սովորությունները, որոնք մեզ կառաջնորդեն կորստյան, բաց պիտի վանենք, արդարության ճանապարհին մեջ պիտի մընենք, բայց տարիները կանցնին, ժամանակը կսահի, և մենք կմնանք մեր վարժության տիղմին մեջ, մեր մեղքերուն մեջ: Կրնա՞ ըլլալ, որ մարդ խոշոր գետի մը մեջ իյնա և գետին սահանքը զինք ստուգապես մահվան տանելու պարագային իրեն երկարող ազատարար ձեռքը մերժե: Անշուշտ ոչ: Բայց մեղքերու փոսին մեջ ինկնող հավատացյալը երբեմն իր Փրկչին ազատարար ձեռքը չընդունիր: Ոչխարը անբան է, իր մայունով հովիվը կկանչե, իսկ մենք բանականությամբ ստեղծված Աստուծո արարածներն ենք, չարը գիտենք, բարին գիտենք, բայց տևաբար կմիտինք չարը գործելու: Այդպես չեղա՞վ մեր նախածնողքին պարագան, երբ պատմության դրախտին մեջ կգտնվեին: Անոնք Աստուծո պատվիրանը անսաստեցին, հաստատված պահեցողությունը առ ոչինչ սեպեցին և մահը մտցուցին այս աշխարհ: Մենք ևս, մեր ակռաներով, մեր որկրամոլությամբ մեր գերեզմանը կփորենք: Եվ ինչպիսի՞ մեղքերով Փրկչին մեզի երկարող ձեռքը կըմերժենք, ճշմարտության ձայնը չենք ուզեր լսել:

Սիրելիներ, այսոր, Արտաքսման կիրակի օրը, հանդիսավորությամբ եկանք Միածնի իջման հայոց այս սրբատեղին, որպեսզի մեր սրտերը բանանք երկնավոր մեր Հորը ճշմարտության, բարության, արդարության, գթության և ողորմածության՝ ըսելու համար. «Ո՛վ Տեր, մեզ մաքրազարդե, ներքնապես շնորհազարդե, որպեսզի կարենանք արդարացյալ հոգիով քեզի գալ՝ ժառանգելու արքայությունը, որ ժամանակներու սկիզբեն հաստատեցիր մեզ բոլորիս համար: Անառակացյալ զավակներու նման քեզի կուգանք, որպեսզի վերստին արդարության պատմուճանը հագցնես մեզի, սրբության մատանին անցնես: Ո՛վ Տեր, կաղաչենք քեզի, որ սուրբ և անմահ այս պատարագի միջնորդությամբ և Սուրբ կույս Աստվածածնի բարեխոսությամբ խաղաղությունդ շնորհես Մերձավոր Արևելքի երկիրներուն, ուր բազմահազար հայեր կապրին. Հայոց աշխարհի սահմանները միշտ անվտանգությամբ պաշտպանես և մեր ժողովուրդը հառաջադիմության և շինության մեջ պահես: Ո՛վ Տեր, մեր աղոթքներուն մրմունջները որպես խունկ երկինք կբարձրացնենք, որպեսզի առողջություն և երկար կյանք պարգևես Ամենայն Հայոց Հայրապետին՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին: Կաղաչենք քեզի, ո՛վ Տեր, որպեսզի հաստատուն և անշարժ պահես սրբություն սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, անսասան և ամուր պահես Հայաստանյայց մեր Մայր Եկեղեցին ամենուրեք, շնորհով զորացնես եկեղեցվո մանկունքը և նոր հովիվներ հարուցանես, որպեսզի շեն և պայծառ ըլլան հայոց եկեղեցիները: Ո՛վ Տեր, կաղաչենք քեզի, որպեսզի մեզ վերստին որդեգրության շնորհին արժանացնես, ինչպես այսօր այս սուրբ պատարագին մեջ, այնպես ալ հավիտենական երանության դրախտին մեջ, ուր հարազվարճ բերկրությամբ աստվածտեսության պիտի արժանանանք՝ այնտեղ ևս կարենալ ըսելու և փառավորելու համար զանուն Ամենասուրբ Երրորդութեանն, որ է օրհնյալ հավիտյանս հավիտենից. ամեն»:

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՆՅԱՆ

ՔԱՐՈԶ

(Ավագ շաբաթ, 18 ապրիլ 1987 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Զի խնդրէք զկենդանին ընդ մեռեալս, չէ աստ քանզի յարեաւ» (Ղուկ. ԻԴ 5—6):

Սիրելի հավատացյալներ,

Մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության Շրագալուցի այս երեկոյան, եկեք մտովի փոխադրվենք մոտավորապես երկու հազար տարի ետ Երուսաղեմ, ուր յուղաբեր կանանց հետ ականատես վկաները լինենք Հիսուսի կենսատու Հարության փաստին: Ինչպես Ավետարանն է վկայում՝ յուղաբեր կանայք, կիրակի առավոտյան շատ վաղ գնում են Հիսուսի գերեզմանը այցելելու, նրա մարմինը, համաձայն տեղական ընդունված սովորության, խնկով օծելու և կտավով պատելու:

Նրանք երկյուղով և զարմանքով նկատում են, որ վիմափոր դամբանի դուռը բաց է. մտածում են, թե արդյոք ո՞վ է իրենցից առաջ եկել ու գլորել դամբանի ծանր քարը: Ներսում չեն գտնում Հիսուսի մարմինը: Ահաբեկված՝ վազում են դեպի Երուսաղեմ՝ եղելությունը Հիսուսի աշակերտներին հայտնելու համար: Պետրոս և Հովհաննես առաքյալները շտապ գալիս են գերեզման և երբ ներս են մտնում, այնտեղ նկատում են Հիսուսի գլխի վարշամակը ծալված և այլ կտավների հետ մի կողմի վրա դրված: Տեսնում են նաև կանգնած երկու հրեշտակների՝ մեկը սնարի և մյուսը ոտքի կողմը: Նրանք հայտնում են եղելությունը՝ ասելով. «Ինչո՞ւ եք ողջին փնտրում մեռելների մեջ. այստեղ չէ, որովհետև հարություն առավ»:

Այս գոտեպնդող հայտնությունից հետո Ավետարանը մի շատ գեղեցիկ պատկեր է բացում մեր աչքերի առաջ. Մարիամ Մագդաղենացին, առանձինն, գերեզմանատան պարտեզում հուսահատ ու մտամոլոր մնալ էր գալիս՝ մտածելով, թե ո՞վ կարող էր գիշերով Հիսուսի մարմինը դամբանից գողանալ: Այդ պահին մի ձեռք թեթև դիպչում է նրա ուսին, և Մարիամը ետ դառնալով ու կարծելով, թե այն պարտիզպանն է, լացակումած և աղերսելով հարցնում է նրան. «Իմ Տերը գերեզմանում չէ, արդյոք չե՞ք ասի, թե ո՞ւր տարան նրան, որպեսզի գնամ և օծեմ նրա մարմինը»: Հավանաբար Մարիամը շատ էր հուզված, այդ պատճառով էլ չճանաչեց իր Տիրոջը: Հիսուս նրան ասում է. «Մարիամ»: Մարիամը սթափվում է և ճանաչելով Տիրոջ ձայ-

ՆԸ ցնծությամբ գոչում է «Վարդապետ»: Նա տեսնում և ճանաչում է հարուցյալ Փրկչին: Հիսուս ինքն է բացահայտում իր ինքնությունը նրան և պատվիրում, որ գնա հայտնի Իր աշակերտներին, որ շուտով միանալու է նրանց:

Արդյոք մեր կյանքի և բնության պատկերը, որ ամեն տարի կրկնվում է, նման չէ՞ Քրիստոսի Հարության խորհրդին: Այժմ մենք բոլորս կարող ենք վկայել, որ ձմեռն անցավ, եկավ գարունը, մեռյալ բնությունը զարթնեց իր քնից, ծառերը ծաղկեցին, դաշտերը զարդարվեցին կանաչ մարգախոտերով, առվակները քաղցր խոխոջով սկսեցին հոսել, ծիծեռնակները պանդխտությունից վերադարձան իրենց նախկին բները, դաշտերում գեղեցիկ ծաղիկներ, հովիտներում շուշաններ բացվեցին, և բնությունը վերստին հարյալ մեռելությունից, թոթափեց մահվան հինը, ոտքի ելավ ու կենսալի ժպտաց:

Մի քանի օր հետո ապրիլի 24-ն է գալու, հայ ժողովրդի մեծ Գողգոթայի հիշատակի օրը: Մենք բոլորս միասնաբար ուխտի ենք գնալու Ծիծեռնակաբերդի Եղեռնի հուշակոթողին՝ աղոթելու և մեր նահատակների հիշատակը հարգելու համար: Նրանք մեռան վասն հայրենյաց, որպեսզի հայ ժողովուրդը ապրի: Նրանք գերեզմաններ չունեցան և չունեն, որովհետև նրանք հարություն առան մահվանից մեր ժողովրդի և նոր Հայաստանի հետ: Նրանք պատուեցին իրենց պատանքները և ապրում են մեզ հետ ու մեր մեջ հավիտյան: Նրանք նմանվեցին Ավետարանում հիշատակված պարարտ հողի մեջ ընկնող և մեռնող ցորենի հատիկին, որ բազմապատկվում է երեսունով, վաթսունով և հարյուրով:

Սիրելի հավատացյալներ, քրիստոնյայի համար Քրիստոսի հրաշափառ Հարության խորհուրդը անհամեմատ ավելի խորն է, քան մեր կյանքի կամ բնության վերազարթոնքի ու նահատակների ոգեղեն ներկայության գաղափարները: Իր նմանությամբ Քրիստոս հարություն է տալու իր հավատավոր հոտի անդամներին, ինչպես մեր Եկեղեցու «Հավատո հանգանակ»-ում մշտապես կրկնվում է. «Ի յարութիւն մեռելոց...»:

Քրիստոսի Հարության գաղափարը հանդիսանում է քրիստոնեական վարդապետության հիմքն ու խարիսխը: Առանց Հարության հույսի, առանց անդենական կյանքի և վերջին դատաստանի վարդապետության, քրիստոնեությունը չպիտի կարողանար խորապես արմատավորվել բազմամիլիոն մարդկանց հոգիներից ներս:

Պողոս առաքյալը՝ քրիստոնեական Եկեղեցու մեծ ջատագովը, իրավամբ ասում է. Եթե Քրիստոս հարություն առած չլիներ, մեր քարոզությունը և ձեր հավատքը իզուր պիտի կորչեին (Ա Կորնթ. ԺԵ 14):

Հրաշափառ Հարության այս երեկոյան, յուղաբեր սուրբ կանանց նման մենք էլ Քրիստոսի աստվածային փառքով լցված՝ փառաբանենք հարուցյալ Փրկչին և հոգևոր խնդությամբ իրար Հարության ավետիսը տանք՝ ասելով. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» և «Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի». ամեն:



ԿՈՄԻՏԱՍ ԱԲԵՂԱ ՀՈՎՆԱՆՅԱՆ

ՔԱՐՈԶ

«Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից» (Մատթ. Ե 10)։

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Ահա Լեռան քարոզի երանելիներից մեկը, որ պատգամեց մեզ Քրիստոս իր քարոզության սկզբնական շրջանին՝ դնելով հիմնաքարը այն նոր կրոնի, որը պիտ կոչվեր քրիստոնեություն։ Ովքե՞ր էին նրանք, որոնց երանի պիտի տրվեր, ո՞ւմ էին վերաբերում այդ երանությունները՝ «աղքատաց հոգւով, սգաւորաց, հեզոց, որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, ողորմածաց որ սուրբ են սրտիւք, խաղաղարարաց որ հալածեալ իցեն վասն արդարութեան, որ նախատիցին և հալածիցին վասն Քրիստոսի»։ Ահա ովքեր որդեգիրներն են այս ամենի, նրանք են, որ պիտի արժանանան հավիտենական երջանկության։ Քրիստոսի հարության հաղթանակը նրանցն է և ոչ այլոց։

Մի քանի օրեր են մեզ բաժանում այն ցնծագին պահից, երբ սգակիր քրիստոնյա աշխարհը ցնծության աղաղակով ընդհատեց անդորրը գիշերային՝ թե՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։ Մարդկային պատմության ամենամեծ հրաշքը, երբ մահվան սարսափը վերածվեց հավիտենականության երջանիկ զգացողության և հարության իրադեպով մի նոր ընթացք ապրեց մարդկությունը՝ նոր գիտակցությամբ և նոր կյանքով։

Այսօր կրկնազատիկ է կամ նոր կիրակի, նոր՝ հանուր քրիստոնեության համար, որովհետև Քրիստոսի հարությամբ իմաստավորվեց կիրակին իբրև տերունական օր, հարության օր, քանի որ Հին Կտակարանում տերունական օրը շաբաթն էր, իսկ Քրիստոսի հարությամբ՝ դարձավ կիրակին։ Սակայն կարծում եմ մեզ համար, հայերիս համար, կարևոր է նաև կրկնազատիկ հասկացողությունն այսօր։ Ապրիլյան մի քանի օրեր, և ինչպիսի ապրումներ իրար հակասող, սակայն և իրար լրացնող. քրիստոնեական զատիկ, հայոց կոտորածի հիշատակ և կրկնազատիկ։ Յուրահատուկ խորհուրդ կա այս երրորդության մեջ՝ խորհուրդ, որ տրվեց մեզ Քրիստոսի հարությամբ, պարտադրվեց մեզ եղեռնական մահով և հաստատվեց ազգային հարությամբ։

Երկու օր առաջ, երբ ապրիլ 24-ի օրացուցային թերթիկը ուխտի և երդումի ոգի էր խտացրել իր մեջ, երբ յուրաքանչյուր հայ, սգո արցունքն աչքերին, խոնարհած հոգով բարձրանում էր դեպի Ծիծեռնակաբերդի մեծ խորհուրդը՝ Եղեռնի հուշարձան, մեր մտքում անշեջ կրակի նման բոցավառվում էին Քրիստոսի խոսքերը՝ «Երանի նրանց, որ արդարության համար են հալածվել, որովհետև նրանցն է Աստուծո

արքայությունը»: Ո՞վ կարող է այս ճշմարտությունը ժխտել, ո՞վ կարող է հակառակվել այն փաստին, որ երկու միլիոն հայ կոտորվեց հանուն իր արդարության ձրգտումի, կոտորվեց օրը ցերեկով, միայն այն բանի համար, որ ուզում էր իր պապենական հողի վրա ապրել իր հավատով, իր մարդկային իրավունքներով, իր ազատությամբ, իր ստեղծարար ոգով, որովհետև նա չէր ուզում կոտորել, չէր ուզում ավերել, չէր ուզում ոչնչացնել, այլ՝ ստեղծել, երկնել, քանզի հրաբուխ էր նրա հոգին, որ մշակույթ էր ժայթքում: Երիտթուրքերի ձեռքը ուզեց խափանել երկունքը հայի, հրամայելով «կոտորած, կոտորած և կոտորած» (Սիամանթո): Թափվեց արյունը անմեղ զոհերի, կին թե ծերունի, աղել թե ջահել: Եվ կոտորվում էր ազգը մեր հայոց այն անխախտ հավատքով, որ իր արդարությամբ պիտի ժառանգի դրախտն աստվածային, քանզի այդ էր պատգամը: Անհնար է կոտորել մի ազգի, որը փյունիկի հոգի ունի: Եվ այդ հոգին հարություն առավ, դարձավ ժողովուրդ, իրականություն, դարձավ Խորհրդային Հայաստան:

Բազում անգամներ ենք մենք ֆիզիկապես պարտվել, սակայն հոգեպես, բարոյապես հաղթել ենք, որովհետև արդարության ոգին, գիտակցությունը, ապրում է մեր մեջ: Մենք հավատացած ենք, որ արդարության համար նահատակված մեր ժողովրդի երկու միլիոն զավակների հոգիները գտնվում են Աստուծո արքայության մեջ, իսկ մենք, իբրև ճշմարիտ և կենդանի ժառանգորդներ պիտի ջանանք նույն ոգով, անխախտ վճռականությամբ դրախտ կառուցել Խորհրդային այս փոքրիկ Հայաստանում, այս քարքարոտ, մեր նահատակների արյունով շաղախված այս հողակտորի վրա, որպեսզի երկրային դրախտից դեպի երկնային դրախտ անցումը դառնա կատարյալ:

Կրկնազատիկ է, հայոց հոգու հարության կիրակին: Եթե մեկ շաբաթ առաջ՝ ուրբաթ, Քրիստոսի թաղման խորհուրդը հետո իմաստավորվեց հարությամբ՝ Զատիկով, ապա ուրբաթ՝ Ապրիլ 24-ին, հայոց «թաղման» խորհուրդը իմաստավորվեց մեր հարությամբ՝ կրկնազատիկով, որն իրականացավ Սարդարապատով և ապա Նոյեմբեր 29-ով: Եվ պիտի գիտակցենք այս ու դարձնենք համոզում, և այդ համոզմամբ պայքարենք կառուցելով, ստեղծելով, երկնելով, մեր գիտակցական գոյությամբ ապացուցելով աշխարհին, որ մենք չենք ծնվել կոտորվելու համար, այլ՝ ապրելու և ստեղծագործելու: Եվ այսօր կրկնազատկի այս սուրբ պատարագին, երդում տանք հայոց Աստծուն, որ երբեք պիտի չմարի մեր մեջ հիշատակը մեր սուրբ նահատակների: Նրանց երազանքները իբրև փարոս ունենալով ընթանանք կյանքում, որպես արդարության մեծ վկաներ:

Աղոթենք առ Աստված, որ բարձրյալն իր արդարության ոգին ներարկի մեզանից յուրաքանչյուրին, որպեսզի այդ արդարությամբ առլեցուն՝ դառնանք որդիները խաղաղության, քանզի առանց արդարության գաղափարի անհնար է ստեղծել խաղաղություն հանուր աշխարհում:

Աղոթենք, որ Աստված պահի, պահպանի ժողովուրդն ու հայրենիքը մեր սուրբ և վերածնված, անսասան պահի հիմունքը Ս. Էջմիածնի և հանուր հայաստանյայց Եկեղեցու և օրհնի նրա Հովվապետին՝ մեր օրերի նոր Մովսես մարգարեին, որն առաջնորդում է հայ հոգիներին դեպի ճշմարիտ հավատ և հայրենասիրություն՝ հանդիսանալով ոգեղեն կամուրջը ընդմեջ Սփյուռքի և Հայոց աշխարհի:

Աստվածային սերն ու միասնականության ոգին թող հարատև ուղեկիցը լինի ձեր և աշխարհասփյուռ հայ ժողովրդի, այժմ և միշտ հավիտյանս. ամեն:

ԱԲԵԼ ԱԲԵՂԱ ՕՂԼՈՒԴՅԱՆ

ՔԱՐՈԶ

«Էլի, Էլի, լամա սաբաքթանի» (Մատթ. ԻԷ 46)։

«Աստված իմ, Աստված իմ, ընդե՞ր թողեր զիս»։

Իմ շատ սիրելի հավատացյալ ժողովուրդ հայոց,

Այսօր, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հիշատակելով կատարում է մեր Տիրոջ և Փրկչի Հիսուսի Քրիստոսի մատնության, չարչարանաց, խաչելության ու թաղման կարգը։ Մենք հավաքվել ենք այստեղ արդիական զգալու շուրջ երկու հազար տարիներ առաջ Գողգոթայի բարձունքին տեղի ունեցած պատմական մի դեպք, մի իրողություն՝ Հիսուս Նազովրեցու խաչելությունը։ Մի մարդ, որ հավակնում էր Աստուծո արքայության գալուստը ավետել մեզ, մեր մեղքերին թողություն շնորհել և ի վերջո ինքն իր անձը «Որդի Աստուծոյ կենդանւոյ» ըմբռնել։ Նա խաչի վրա խստագույնս պատժվեց, որովհետև նրա ավետիսը իր ժամանակակիցների կողմից որպես հանդուգն մի աստվածհայհոյություն» մեկնաբանվեց։ Սակայն նրա կրած անեծքն ու մահը մեղավոր մարդկության համար Աստուծո կողմից փոխվեց հավիտենական օրհնության և կյանքի։ Անարգանքի գործիքը հարգանքի և օրհնության, իսկ մահը՝ հավիտենական կյանքի վերածվեց։ Ի՞նչ է քրիստոնեական մահվան, բայց բազում արդյունք տվող և իրական կյանքի վերածվող մեռնող հացահատիկի տրամաբանությունը։

Նախ պետք է ըմբռնենք, թե քրիստոնեական հավատքի տեսանկյունից ի՞նչ է ընդհանրապես մահը, որպեսզի կարողանանք քայլ առ քայլ առաջնորդվել այսօրվա խորհուրդին մեջ։

Յուրաքանչյուր անհատ կարող է իր մարդկային գոյության և մահվան, իր անցողականության հիմքի վրա ինքն իրեն հետևյալ հարցումը տալ. «Ես չկայի, հիմա կամ և չեմ լինելու։ Որտեղի՞ց եղա, ինչո՞ւ համար կամ, ո՞ւր եմ գնալու և ի՞նչ եմ լինելու»։ Մարդկային էական այս հարցումների պատասխանը Հիսուս իր սուրբ կյանքի և իրականության անօրինակ օրինակով մի անգամ ընդմիշտ տվեց։

«Չկայի, հիմա կամ և չեմ լինելու» կյանքի իրողությունը կարծեք մեր մեջ այն համոզմունքն է գոյացնում, թե ամեն գոյ ոչընչությունից է ծնվում, գոյանում, առժամա-

նակ մի, վերստին դեպի չգոյություն վերադառնալու համար: Սակայն քրիստոնեական հավատքը ըմբռնելի է դարձնում մեզ, որ ամեն գոյ և ամեն կյանք Աստուծո հավիտենական գոյատվությունից կամ կենատվությունից է ծնունդ առնում: Յուրաքանչյուր կյանք լինում է կատարելապես ինքնատիպ՝ Աստուծով և մահվան միջոցով, մահը որպես վերջնագույն նախապայման նոր հնարավորությունների՝ և նոր կյանքի, որով մարդս վերստին դառնում է առ Աստված: Այսպիսով, ոչնչությունը՝ որտեղից ծնվում և որտեղ մահվան միջոցով և մահվանից հետո լինում ենք մենք, դառնում է կատարելապես դրական: Այս իրողության բնագիտական ըմբռնումը մեր հնարավորությունների մեջ չի կարող լինել. բայց հավատքի տրամաբանությունը հստակորեն հասկանում է դրական այս ոչնչությունը կամ չգոյությունը, որի մթության մեջ Աստուծո իրականությունն է թաքնված: Այս հիմքի և փորձառության վրա եկեղեցու մեծ սուրբերից մեկը մահը կոչում է «եղբայր իմ մահ»:

Սակայն մարդս այս դրական չգոյությունից բացի գիտի նաև բացասական մի չգոյության մասին, որ առաջանում է մեղքի միջոցով, երբ մարդս իր հնարավորությունների ազատության մեջ, իր ծայրահեղ խստասրտությամբ մերժում է աստվածայինը: Մեղքը ոչ միայն մարդուս և Աստուծո միջև գոյություն ունեցող կյանքի պորտալարն է պոկում, այլ նա մարդուն ինքն իր մեջ այլասերելով դարձնում է ընդրան իր եղբայրների ու քույրերի նկատմամբ մի գայլ, մի հրեշ:

Այս բացասական ոչնչության կամ չգոյության իրողության առջև մարդ արարածը զգում է իր մեջ իր գոյությանը կամ իր անձին սպառնացող վտանգի նախատրված մի վախ. վախի բոլոր արտահայտությունների աղբյուրը՝ մեր գոյությունը կորցնելու վախի հիմքի վրա կարելի է հասկանալ:

Գեթսեմանիի գիշերվան մեջ Հիսուս չարչարանաց և խաչելության մոտալուտ մահվան անխուսափելի իրողության առջև կատարյալ անորոշության է մատնվում: Կարծեք վախը տիրապետում է նրան, մինչդեռ նա վախի ամբողջ իրականությունից արյուն է քրտնում: «Սիրտս տխուր է մահու չափ, վախենում եմ մահից,—խոստովանում է Հիսուս և աղերսում Աստուծո,—Աբբա, հայր իմ, այս բաժակը՝ մահը, հեռացրու ինձնից»: Անավասիկ Հիսուսի կյանքում ևս մի իրողություն, որտեղ բացահայտվում է նրա այնքան մարդկային լինելը, մարդը՝ այնպես ինչպես որ է: Այլապես, ինչպես անխախտականությունը, նույնպես և բացարձակ անվախությունը՝ հավասար է անմարդկայնության:

Բայց Գեթսեմանիի գիշերվան մեջ, Հիսուսի մոտ մի ուրիշ իրողություն էլ ենք զգում: Վախի հետ զուգընթաց և վախից էլ զորեղ, հանդես է գալիս նրա մոտ անսահման ապրումը սիրո, որ հաղթում է վախին. սեր հանդեպ աշխարհին, սեր հանդեպ մեղավոր մարդկության: Եվ քանի որ Հիսուսի խաչելությունը Խորհուրդ խորինն էր մարդկային փրկության, հետևաբար իր անսահման սիրուց մղված ասում է Հիսուս, «Հայր, ոչ թե Իմ ցանկությունը, այլ Քո հայրական խորհուրդը, թող Քո հայրական կամքը մեղքի կապանքների մեջ հեծող մարդկության նկատմամբ՝ Իմ միջոցով կատարվի»:

Ինք որ անմեղ էր, առաքյալի խոսքերով՝ «Մեղքի և անեծքի է վերածվում»: Նա ստրկանալով, իր վրա է վերցնում մեղքի ճիրանների մեջ հեծող մարդուս ստրկությունը: Մեղանչող մարդը այլևս պատկերը չէ Աստուծո: Նա ինքն իր մեջ և իր աստվածնմանության մեջ այլևս արժեք չի ներկայացնում, այլ նա դառնում է մեղքի ստրուկը: Հիսուս այս ստրկությունը կամավորապես իր վրա է վերցնում, որպեսզի փրկագործության խորհուրդը՝ «Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի» իրականացնե: Նա ցանկանում է մեղքի հետևանքով առաջացած մարդկային անորոշության ամենախոր հատակը իջնել: Նա ցանկանում է Աստուծո կենատու ներկայությունից այն կողմ, մարդկային մեղքի ստեղծած Աստծուց լքվածության ամբողջ ահավորությունը զգալ ու ապրել: Նա ցանկանում է բոլոր մեղավորների հետ և բոլոր մեղավորների փոխարեն, իր էության խորքից բացականչել. «Էլի, Էլի, լամա սաբաքթանի»: «Աստված իմ, Աստված իմ, ընդե՞ր թողեր զիս».

Սակայն Աստծուց լքվածության զուգահեռ, Հիսուսի մոտ հանդես է գալիս նրա աստվածմոտիկության խորագույն համոզմունքը: Եվ արդյո՞ք տառապող արդարը, որպիսին էր Հիսուս, աստվածարդարացման և աստվածհայտնության դրական պատասխանը պետք չէ որ գտներ: Խաչի վրա Հիսուսի վերջին խոսքերը միանգամ ընդմիշտ հստակ են դարձնում Աստուծո ներկայությունը և նրա մոտիկությունը մեզանից յուրաքանչյուրին մեր կյանքի բոլոր հանգրվաններում. «Աստված իմ, քո ձեռքերի մեջ եմ ավանդում իմ հոգին: Այնպես ինչպես երեխան իր մոր գիրկն է նետվում իրեն կանխատրված այն զգացումով, թե

նա իր մոր ձեռքերում իր ամբողջ ապահովությունն է գտնելու, նույնպես և ես մահվան մեջ և մահվան միջոցով իմ կանխատու հավատքով Քո գիրկը, Քո ձեռքերի մեջ եմ ավանդում իմ հոգին, որպեսզի աչուհանդերձ Քո մեջ և Քեզ հետ հավիտենապես լինեմ»:

Սիրելի հավատացյալներ, այսօր խոսքերս մանավանդ ձեզ եմ ուղղում, դուք, որ խուռներամ հավաքվել եք այստեղ, մեզ հետ ոգեկոչելու հիշատակը մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուսի չարչարանաց, խաչելության և մահվան կարգը, թող այս արարողությունը ձեզ մոտ պարզապես անցողիկ ինչ որ զգացական ապրումների չվերածվի: Ռոմանտիկ զգացումներից այն կողմ բոլորովին մի ուրիշ ճշմարտություն գոյություն ունի: Թափանցեք, ներհայեցեք դուք ձեր խորքը և եթե կարող եք, գերազանցեք դուք ձեր հոգվույն խորքը, որպեսզի դուք ձեր իրական արժեքն ու ճշմարտությունը գտնեք ձեր հոգիների մեջ, որ է Աստված: Թող այսօրվա խավարումը գիշերվա լինի ձեր հոգիներում Քրիստոսի հետ հանդիպումի և վերածնունդի «լուսո առավոտը»: Ուզում եմ, որ դուք այստեղից դատարկաձեռն տուն չգնաք, այլ ձեզ հետ տանեք մի ճշխար այսօրվա սուրբ խորհրդից Քրիստոսի: Թող խաչեցյալն Քրիստոս օրհնի ձեզ և բոլորիդ և իր Սուրբ Հոգով հուսավառի ձեր հոգին, իր հավատքով գոտեպնդի ձեզ, այժմ և հավիտյանս, ամեն:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ»:



ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ

Փետրվարի 16-ին, երկուշաբթի օրը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանի հրավերով, Երևանի Ս. Սարգիս եկեղեցում սուրբ պատարագ մատուցեց Ս. Էջմիածնի Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանը:

«Հայր մեր»-ից առաջ սրբազան հայրը քարոզեց ժողովրդին՝ ևս մեկ անգամ նրանց հոգիներում արթնացնելով Ս. Սարգիս զորավարի և իր որդու՝ Մարտիրոսի մարտիրոսության պատմությունը: Սրբազանը գեղեցիկ և բովանդակալից կերպով ներկայացրեց առաջին քրիստոնյա վկաների մարտիրոսության նշանակությունը քրիստոնեական դաղափարների հաղթանակի և ամրապնդման համար:

Պատարագին ներկա էին թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը, քահանայից դասը և բազում հավատացյալներ:

*
* *

Փետրվարի 22-ին, կիրակի օրը, առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում ս. պատարագ մատուցեց Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանը:

«Հայր մեր»-ից առաջ առաջնորդ. սրբազանը իր քարոզի մեջ հավատացյալներին պատմեց Ադրբեջանական հանրապետությունում գործող հայ եկեղեցիների ներկա վիճակի մասին, փոխանցեց Ադրբեջանի հայ համայնքի եղբայրական ողջույններն ու բարի մաղթանքները:

Այնուհետև սրբազանը ամփոփ և գեղեցիկ կերպով ներկայացրեց սույն թվականի փետրվարի 11-ից 16-ը Մոսկվայում կայացած խաղաղության նվիրված միջազգային համաժողովի աշխատանքները, որին մասնակցեց նաև Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը, որպես գլուխ և ներկայացուցիչ Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցու: Ապա սրբազանը ընթերցեց Վեհափառ Հայրապետի՝ համաժողովում արտասանած ճառը:

*
* *

Ամեն տարի առավել հանդիսավորությամբ և շուքով է տոնվում Ս. Ղևոնդյանց քահանաների նահատակության խնկելի հիշատակը Արարատյան հայրապետական թեմում: **Փետրվարի 24-ին,** երեքշաբթի օրը, Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում հավաքվել էին սովորականից ավելի հավատացյալներ, ինչպես նաև իրենց ուխտը նորոգելու էին եկել Արարատյան հայրապետական թեմում ծառայող բոլոր հոգևորականները:

Օրվա հանդիսավոր տոնի առթիվ ս. պատարագ մատուցեց Տ. Աթանաս քահանա Մովսիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզեց՝ «Ով մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի» (Հռոմ. Ը 35) բնաբանով: Պատարագիչ տեր հայրը Ս. Ղևոնդյանց քահանաների նահատակության օրինակով վեր հանեց հանուն հայրենիքի գիտակցված մահով նահատակվելու վսեմ գաղափարը:

Հավարտ սուրբ պատարագի Արարատյան թեմի առաջնորդարանում, ի պատիվ հոգևոր դասի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ:

*
* *

Սույն թվականի **փետրվարի 26-ին** Վարդանանց նահատակների տոնի առթիվ Երևանի Ս. Զորավոր եկեղեցում պատարագ մատուցեց Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը:

տաշատի Մրգավան գյուղի Ս. Հակոբ եկեղեցում: Դեռ շարունակում է հնչել եկեղեցի կերտող շինարար վարպետի մուրճի ձայնը Արարատյան դաշտավայրի այս գողտրիկ հատվածում: Վաղ առավոտից զիլ ձայնով հնչող զանգակների ղողանջը այստեղ է հավաքել բազում հավատացյալների:

Առաջնորդական փոխանորդ սրբազան հայրը՝ շրջապատված քահանայից դասով, Երևանի Ս. Սարգիս եկեղեցու շքամուտքի առջև

«Հայր մեր»-ից առաջ սրբազան հայրը քարոզեց՝ «Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ» (Եղիշե) բնաբանով: Սրբազան հայրը հավատացյալներին խորիմաստ հատվածներ հիշեցրեց ոսկեղենիկ Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմի» մատյանից, որպես այսօրվա մեր կյանքի և հայրենասիրական ոգու աղբյուր:

*
* *

Այսօր **մարտի 18-ն** է: Դեռ չեն վերջացել շինարարական աշխատանքները Ար-

Այսօր պիտի օծվի և սրբագործվի նորակառույց զանգակատան Ս. Խաչը: Այս հանդիսավոր արարողությանը մասնակցելու են եկել նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանը, կառուցող-ինժեներներ Միքայել Հովհաննիսյանը, Հարություն Մանուկյանը, Հակոբ Բաբախանյանը, բանվորներ, գործադիր և թեմական խորհրդի հարգարժան անդամներ: Արդեն տեղադրված է Ս. Խաչը նորակառույց զանգակատան գմբեթի վրա, որտեղ և պետք է կատարվի սրբազան արարողությունը: Հոգևորականների թափորը՝ նախագահությամբ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական

փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանի, բարձրանում է վեր և բոլորվում տերունական խաչի շուրջ:

տյառնագրում է. «Օրհնեսցի, օծցի և սրբեսցի ս. խաչիս և ս. միտոնաւս և աւուրս շնորհիվ...»: Արծաթափայլ սուրբ մեռոնի

Մի պահ ս. խաչի օրհնության արարողությունից

Սրբազան արարողությանը մասնակցում են նաև Տ. Կարապետ ավագ քահանա Գալըճյանը և Տ. Նորայր քահանա Բաղդասարյանը:

Սրբազան հայրը լվանում է ս. խաչը նախ ջրով, ապա գինով: Կարդացվում են մարգարեական ընթերցումներ, Ավետարան: Այնուհետև սրբազանը իր ձեռքը վերցրած ս. Մեռոնը՝ հանդիսավորությամբ

կաթիլները շողշողում են նորաօծ խաչի նախ «զԱկն, ապա զթագն և ապա առեակ թևսն և զբունն»: Հնչում է «Խաչի քո Քրիստոս երկիր պագանեմք» շարականը: Թափորի մասնակիցները մեկ առ մեկ, մեծ երկյուղածությամբ, մոտենում և համբուրում են մեռոնաբույր ս. խաչը:

ՆՈՐԱՅՐ ՔԱՀԱՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ





ԱՂԲՅՈՒՐ-ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄ Ս. ԾՈՂԱԿԱԹ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սուչն թվականի ապրիլի 24-ին, ս. պատարագից հետո, Էջմիածին քաղաքի Ս. Ծողակաթ եկեղեցու շրջափակում, տեղի ունեցավ Կեսարիայի Պունյան գյուղի՝ 1915 թվականի նահատակների հիշատակը հավերժացնող աղբյուր-հուշարձանի բացումը:

Աղբյուր-հուշարձանը կառուցվել է հրամանով Ամենայն Հայոց կաթողիկոսի և արդյամբ ու ծախյուք կեսարացի, ամերիկահայ տեր և տիկին Խորեն և Երվանդուհի Ասատուրյանների: Ճարտարապետն է Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ պրն. Արծրուն Գալիկյանը:

Նորակառույց աղբյուր-հուշարձանը 2×1.80 չափերի մի բազալտե կոթող է, զարդարված հայ ճարտարապետությանը հարազատ նոան հարթաքանդակներով, որոնք միահյուսվելով՝ հավերժության խորհրդանիշի մի յուրօրինակ պատկեր են ներկայացնում: Հուշարձանի ճակատային մասում զետեղված է շինարարական արձանագրությունը՝ հետևյալ բովանդակությամբ.

ՌՆԼԶ
Ի ՅԻՇԱՏԱԿ ԿԵՍԱՐԻՈՅ ՊՈՒՆԵԱՆ
ԳԻՒՂԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՆՈՒԻՐՈՒՄ ԵՆ
ԽՈՐԷՆ ԵՒ ԵՐՈՒԱՆԴՈՒՀԻ
ԱՍԱՏՈՒՐԵԱՆՆԵՐԸ

Աղբյուր-հուշարձանի բացման արարողությանը նախագահում էր Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Բացման արարողության ավարտից հետո բովանդակալից խոսք ասաց սրբազան հայրը.

«Սիրելի ներկաներ և շատ սիրելի ազնըվափայլ բարերարուհի տիկին Երվանդուհի Ասատուրյան, այսօր՝ ապրիլ 24-ի հոգեխռով օրվա ընթացքում, երբ մենք բոլորս բարձրացանք Ծիծեռնակաբերդ՝ մեր հարգանքի տուրքը մատուցելու մեր նահատակների հիշատակին, և Ս. Էջմիածնի մեջ ս. պատարագ մատուցելով վերհիշեցինք նրանց և ապա, Էջմիածնի Ապրիլյան հուշարձանի առջև կրկին անգամ ուխտ կնքեցինք հավատավոր զավակները մնալու Հայաստանյայց Ս. Եկեղեցու և մեր սրբազան հայրենիքի, հիւսկ ուրեմն եկել ենք այստեղ՝ այս աղբյուր-հուշարձանը բացելու, որ նվիրված է Կեսարիայի Պունյան գյուղի աղբյուրին:

Հավանաբար այնտեղ՝ Կեսարիայում, Ապրիլյան եղեռնի ցեղասպանության օրերից հետո Պունյան գյուղի աղբյուրը ցամաքեց: Բայց հայի հոգին, կեսարացի հայի հոգին չցամաքեց բնավ: Այդ հոգին վերըստին եռաց իր սրտի մեջ, կրկին անգամ կենդանություն ստանալով՝ որպես պաղպաջուն աղբյուր եղավ, հոսելու Ս. Ծողակաթի այս գեղեցիկ շրջափակին մեջ: Այստեղ պիտի կարկաչի տարահալած հայ կեսարացու սրտի, հոգու աղբյուրը, այստեղ պիտի կարկաչի հավերժական աղ-

բյուրը հայրենական, որ կյանք պիտի պարգևի նրանց, ովքեր պիտի գան այստեղից խմելու և արբենալու, ոչ միայն մարմնով հագենալու և հովանալու, այլ նաև հաղորդվելու մեր նախահայրերի հետ, մերձենալու նրանց հոգու աղբյուրին և իրենց պապակած շրթները հովացնելու Մեծ եղեռնի օրերին զոհված հայ նահատակների հիշատակով: Այսօր եկել ենք այստեղ ոչ միայն աղբյուր-հուշարձանի բացումը կատարելու, այլ նաև ուխտի, որ Արևմտյան Հայաստանի մեր բոլոր գավառների և բոլոր շրջանների ու քաղաքների հայոց հիշատակը պայծառ մնա միշտ մեր սրտում: Թեև նրանք գնացին, բայց նրանց նահատակությունը կյանք և կենդանություն պարգևեց մեր ժողովրդին Արևելյան Հայաստանում: Մենք սթափվեցինք և մեր ամբողջ կարողությամբ աշխատեցինք պահել մնացորդացը մեր հոտի մեր ներկա հայրենիքում՝ Սովետական Հայաստանում: Եվ պետք է մենք գիտակցենք, թե այսօր ինչպես պետք է գուրգուրենք մեր հայրենիքը, որքան պետք է սիրենք և նվիրվենք նրան: Մեր քրտինքի ամեն մեկ կաթիլը, որ թափվում է այս հողի վրա, սրբագործում է հայրենի հողը: Ինչքան ծաղկի ու բարգավաճի մեր հայրենիքը, այնքան մեր նահատակների հիշատակը կպայծառանա: Նրանք թեև մարմնով մեզ հետ չեն, բայց վստահ ենք, որ հոգով ապրում են և պիտի ապրեն մեր մեջ: Մենք գիտենք հարգել մեր նահատակներին, որովհետև նրանք գիտակցաբար մահացան, մահացան վասն հավատոն և վասն հայրենյաց: Նրանց նահատակությունը դեպի հարություն, դեպի կյանք, դեպի հաղթանակ տարավ մեր ժողովրդին:

Շատ հարգելի տիկին բարերարուհի, մենք այսօր Ձեզ շնորհավորում ենք, որ Կեսարիայի Պունյան գյուղի հիշատակը այստեղ պայծառացրիք այս աղբյուր-հուշարձանով: Հայաստանի տարբեր մասերում մենք ունենք ուրիշ հուշարձաններ և հուշաղբյուրներ ևս, որ մեր Արևմտյան Հայաստանի հիշատակն են պայծառացնում, մեզ վերհիշել են տալիս մեր անցյալը:

Թող օրհնյալ լինեն Պունյան գյուղի բոլոր անմեղ զոհերը և թող Աստծու օրհնությունը իջնի նրանց վրա»:

Սրբազան հոր սրտառուչ խոսքից հետո բոլոր ներկաները մոտեցան աղբյուր-հուշարձանին և, օրհնանքի խոսք ասելով նահատակ պունյանցիների հիշատակին, խմեցին նրա սառնորակ ջրից:





ՏԻԿԻՆ ԱՍՏՂԻԿ ՔՅՈՒՐՔՃՅԱՆԻ ԱՃՅՈՒՆԱՏՈՒՓԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Սույն թվականի ապրիլի 20-ին, Մայր տաճարում մեռելոցի ս. պատարագից և «վասն համօրէն ննջեցելոց» հոգեհանգստյան արարողության կատարումից հետո, Մայր Աթոռի միաբանությունը, արտասահմանցի հյուրեր ու բազմաթիվ հավատացյալներ, ի գլուխ ունենալով Վեհափառ Հայրապետին, ուղևորվեցին Ս. Գայանե վանք:

Դեռևս ամիսներ առաջ էր, որ հանդիսավորությամբ Մայր Հայրենիքի հողում ամփոփվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեծագործ բարերար, սփյուռքահայ ազգային-հասարակական գործիչ Սարգիս Քյուրքճյանի աճյունատուփը: Այս անգամ Քյուրքճյան ընտանիքի ավագ որդին՝ պրն. Գևորգ Քյուրքճյանը, մեծ վշտով Հայրենիք էր բերել իր հանգուցյալ մոր՝ Աստղիկ Քյուրքճյանի աճյունատուփը:

Ս. Գայանե վանքում դեռ նոր էր ավարտվել ս. պատարագը: Ծուտով Մայր Աթոռի ողջ միաբանությունը համախմբվեց վանքի հյուսիսակողմում, Սարգիս Քյուրքճյանի շիրիմի կողքին պատրաստված գեռեզմանի շուրջ: Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ կատարվեց հոգեհանգստյան կարգը՝ ըստ Հայ Եկեղեցու ծիսարանի: Թաղման հանդիսավոր կարգը կատարելուց հետո հանգուցյալի եկեղեցասեր ու ընտանիքին նվիրված օրինակելի կյանքի մասին սրտառուչ խոսք ասաց Վեհափառ Հայրապետը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԱՍՏՂԻԿ ՔՅՈՒՐՔՃՅԱՆԻ ՇԻՐԻՄԻՆ

Այսօր մենք հավաքվել ենք Սարգիս և Աստղիկ Քյուրքճյանների շիրիմի շուրջ, հատկապես հողին հանձնելու համար աճյունները Աստղիկ Քյուրքճյանի, որ Լոնդոնում իր աչքերը փակեց յուր սիրեցյալ ամուսնու՝ Սարգիս Քյուրքճյանի մահից հետո:

Հանձնեցինք, ինչպես տեսաք քիչ առաջ, փոքրիկ մի սափոր, որի մեջ գտնվում էին աճյունները Աստղիկ Քյուրքճյանի: Այդտեղ ամփոփված էր մի ամբողջ կյանք: Մի ամբողջ կյանք՝ նվիրված յուր ընտանիքին, յուր զավակաց և իր թոռներին, մի ամբողջ կյանք, նվիրված մեր Եկեղեցուն և մեր եկեղեցական համայնքին ի Լոնդոն, մի ամբողջ կյանք նաև նվիրված մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Ես նրանց հիշում եմ՝ և՛ Սարգիս, և՛ Աստղիկ Քյուրքճյաններին հենց այն օրերից, երբ Աստծո կամքով Մենք Հայրապետական Սուրբ Օծումը ստացանք 1955 թվականին: Նրանք ներկա էին: Նրանք ներկա էին ոչ միայն իբրև ներկայացուցիչները Լոնդոնի հայ համայնքի, ինչպես կային շատ նման ներկայացուցիչներ այնտեղ, այլ եկած էին կարծեք մի ուխտ կատարելու՝ վերջնականապես, ամբողջապես նվիրվելու և հավատարիմ մնալու համար Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և նորընտիր Հայրապետին:

Ավելի քան երեսուն տարիներ ես շարունակ խորապես զգացի նրանց հոգատար, անսակարկ, շինարար վերաբերմունքը հանդեպ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի: Եվ ասեմ, որ հենց առաջին այդ առիթից, երբ ինքը կնքահայրն էր իմ օծումին, նա սկզբնավորումը դրեց այն վերաշինական աշխատանքներին, որոնք երեսուն և ավելի տարիների ընթացքում կատարվեցին Մայր Աթոռում և Հայաստանում՝ եկեղեցաշինական իմաստով: Նա եղավ նախակարապետը, առաջին բարերարը: Հենց այդ օրը, մեծաքանակ ապրանքներով եկավ և լեցուց մեր Վեհարանը, որի արդյունքներով սկսանք մենք առաջին շինարարական համեստ աշխատանքները: Եվ մեր աղոթքներում եթե մենք հիշում ենք հաճախ «երանի եկեղեցի շինողաց», այդ վերաբերում է մասնավորապես Սարգիս և Աստղիկ Քյուրքճյաններին: Նրանք իսկապես եկեղեցի շինողներ եղան թե՛ Էջմիածնում, թե՛ Երևանում, Ս. Սարգիս եկեղեցին ինչպես գիտեք, և՛ նաև Լոնդոնում, և՛ նույնիսկ ուրիշ համայնքների եկեղեցիների բարեկարգության համար իրենց շինարար բարի ձեռքը երկարեցին և՛ Ծնն, և՛ Միլանո, և՛ ուրիշ վայրեր:

Ահա այս պահում մենք կանգնած ենք նրանց անմոռանալի հիշատակի առաջ: Եվ շատ խորհրդանշական է այս օրը՝ Զատկի հաջորդ օրը, երբ տակավին գտնվում ենք Սուրբ Հարության շնորհների ներքև: Ահա այդ հավատքով և Քրիստոնեական մեր հույսով բարձրացնում ենք մեր աղոթքը առ Աստված, որպեսզի Տերը խաղաղությամբ, ողորմությամբ և քաղցրությամբ ընդունի հոգին Աստղիկ Քյուրքճյանի և արժանի անի նրա ամուսնու՝ Սարգիս Քյուրքճյանի հետ հավիտենական կյանքի:

Աստղիկ Քյուրքճյան նաև խորապես հավատացյալ կին էր. իր ամբողջ բարերարությունը, եկեղեցաշինությունը բխում էր իր կրոնական հավատքից: Ամեն անգամ, երբ Հայաստան էր գալիս, ես զգում էի այդ, որովհետև նա ապրում էր զգացմունքը, որ հայ հավատքի կենտրոնը այս սրբազան հողի վրա է գտնվում, Ս. Էջմիածնում, որտեղ Միածին Որդին իջավ և իր դրոշմը թողեց Հայաստան աշխարհի վրա: Ինք հավատում էր այդ հրաշքին, պիտի ասեի, նյութական առումով նույնիսկ: Արդ, իր համար, և մեզ բոլորիս համար, հույժ մխիթարական է, որ Աստղիկ և Սարգիս Քյուրքճյանները իրենց աճյուններով գտնվում են այս նույն սուրբ հողի մեջ, օրհնված այս հողի վրա, հավիտենական կյանք ժառանգելու մեծ հույսով:

Թող Աստված արժանի անի նրանց այդ հույսի կատարման և օրհնյալ պահի հավետ նրանց բարի հիշատակը այստեղ՝ երկրի վրա, և այնտեղ՝ երկնքում:

Իմ ցավակցություններս և հայրական սերը այս առիթով ներկայացնում եմ նրանց հարազատ որդվույն, նույնքան հավատավոր հոգի կրող Ջորջ Քյուրքճյանին, իր եղբորը՝ որ Լոնդոնում է, բայց այսօր հոգով-սրտով մեզ մոտ է անշուշտ, և իր ամբողջ ընտանիքի անդամներին, մաղթելով նրանց քաջառողջ երկար կյանք, որպեսզի երկար, երկար տարիներ միշտ միասին հավաքվենք այս շիրիմի շուրջ՝ աղոթելու համար նրանց հավիտենական հանգստի և ձեր արևշատության և ձեր ընտանեկան երջանկության համար:

Օրհնություն և լույս Սարգիս և Աստղիկ Քյուրքճյանների արդար հիշատակին: Ամեն:

Այնուհետև սգո թափորի մասնակիցները համախմբվեցին Տիրամոր՝ Սիրանույշ Պալճյանի գերեզմանի շուրջ, ուր նույնպես հոգեհանգստյան կարգ կատարվեց:

Նույն օրը, ժամը 14-ին, Մայր Աթոռի սեղանատանը, ի հիշատակ հանգուցյալ Քյուրքճյան ամուսինների, տրվեց հոգեճաշ, որի ընթացքում պրն. Գևորգ Քյուրքճյանը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ Քյուրքճյան ընտանիքի հանդեպ ցուցաբերած հայրական ջերմ հոգատարության համար:



ԼՈՒՐԵՐ ՄՈՍԿՎԱՅԻՑ

1982 թ. Մոսկվայում կայացած միջեկեղեցական ու միջկրոնական խաղաղության համաժողովից հետո յուրաքանչյուր տարի Ռուսաց Պատրիարքարանի նախաձեռնությամբ տեղի է ունենում խաղաղությանը նվիրված ժողով՝ «Կլոր սեղան» անվանումով, որի նշանաբանը 1982 թ. ժողովի գինաթափման կոչն է հանուն խաղաղության: Ամեն անգամ, ըստ օրվա պահանջների, կազմվում է ժողովի գործունեության ծրագիրը:

Այս տարի ևս, մարտի 18—20 օրերին, Մոսկվայում տեղի ունեցավ հերթական խաղաղության համաժողով՝ «Կլոր սեղան», «Ընդհանուր անվտանգությունը և բարոյական արժեքները» թեմայով: Ժողովին մասնակցում էին շուրջ հարյուր ներկայացուցիչներ աշխարհի տարբեր երկրներից: Սույն ժողովի նախագահն էր Հնդիկ Մալաբար Եկեղեցու միտրոպոլիտ Նորին Սրբություն Պողոս Մար Գրիգորին: Վերոհիշյալ ժողովին Հայաստանյայց Եկեղեցին ներկայացնում էր Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

Ժողովի ընթացքում քննարկվեցին զանազան միջազգային-քաղաքական հարցեր, քննադատվեցին ռազմական մրցավազքն ու աստղային պատերազմի ծրագրերը: Ժողովի ընթացքում բարձր գնահատվեցին ՍՍՀՄ կառավարության խաղաղասիրական քայլերը:

Հավարտ ժողովի կազմվեց «Կոմյունիկե» և Երկիր մոլորակի խաղաղությունը պաշտպանելու վերաբերյալ կոչեր հղվեցին ՍՍՀՄ կոմունիստական Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին, ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռեյգանին և ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պերես Դ'Կուելյարին:

ՍԱՆԴՐՈ ԲԵՀԲՈՒԴՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԵԶՅԱՆՑ
(1835—1905)

Հայ ժողովրդի մտավոր կյանքի զարգացումը նոր ընթացք ստացավ և բուռն վերելք ապրեց Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո: Այդ պատմական իրադարձությունը հայ ժողովրդի համար շրջադարձային մեծ նշանակություն ունեցավ: Պատմության այս նոր ժամանակաշրջանի հայ մտավորականության նախաձեռնած շարժումը նպատակամղված էր ժողովրդի լուսավորության, նրա պատմության, մշակույթի զարգացման, ազգի ճակատագրի հարցերի ուսումնասիրմանը: Լուսավորության ստեղծումը, ժողովրդին գրականությանը հաղորդակից դարձնելը համարվում էր հայ գործիչների առաջնահերթ խնդիրներից մեկը: Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելը և հայ-ռուսական կապերի ուժեղացումը հնարավորություններ ստեղծեցին, որ հայ մշակույթն ավելի սերտորեն առնչվի ռուսական առաջավոր մշակույթի հետ և զարգացման նոր հեռանկարներ ձեռք բերի: Արևելահայաստանի առաջավոր շատ գործիչներ ապրում և ստեղծագործում էին մեծ մասամբ Մոսկվայում, Պետերբուրգում, Թիֆլիսում, Նոր Նախիջևանում, Ղրիմում, Աստրախանում:

Ժողովրդի լուսավորության, կրթության հարցերով էր մտահոգված նաև 19-րդ դարի 50-ական թվականներից ազգօգուտ գործունեություն ծավալած բանասեր, պատմաբան, մանկավարժ և ուսուցիչ, պետական աստիճանավոր և հասարակական գործիչ, արևելագետ Կարապետ Հարությունի Եզյանցը (Եզով): Նա իր բազմաթիվ պատմա-բանասիրական, հրատարակչական, թարգմանական գործերով պատվավոր տեղ է գրավում անցյալ դարի հայ մտավորականների շարքում:

Կարապետ Եղյանցը ծնվել է 1835 թ. սեպտեմբերի 5-ին Մոսկվայում: Նրա նախնիները ժամանակին Թիֆլիսից Աստրախան էին տեղափոխվել, այնտեղից էլ՝ Մոսկվա: Կ. Եղյանցը 1850—1853 թթ. ուսանել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում և այն ավարտել ոսկե մեդալով:

Ճեմարանում ուսանելու տարիներին Եղյանցը իբրև մասնագիտություն ընտրում է արևելագիտությունը, հատկապես՝ հայոց լեզուն: Ապա ուսանում է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների բաժնում: Ավարտելուց հետո, աչքի ընկնելով իր բացառիկ ընդունակություններով և հմտությամբ, նա համալսարանի վարչությունից առաջարկություն է ստանում պատրաստվելու պրոֆեսորության և ստանձնելու հայոց լեզվի ու գրականության ամբիոնը: Սակայն Մկրտիչ Էմինի առաջարկով նրա փոխարեն Պետերբուրգի համալսարանի արևելագիտության ամբիոնի վարիչ է ընտրվում Հարություն վարդապետ Ալամդարյանի թոռ Քերովբե Պատկանյանը, որը 1857 թ. Պետերբուրգի մանկավարժական ինստիտուտի պատմական գիտությունների բաժինն ավարտելուց հետո, երկու տարի Թիֆլիսում ուսուցչություն էր արել և տեղափոխվել նորից Պետերբուրգ:

Կ. Եղյանցը պաշտոն է ստանձնում ներքին գործերի մինիստրությունում և այնուհետև լուսավորության մինիստրությունում՝ որպես մինիստրության խորհրդի և ուսումնական կոմիտեի անդամ:

1850-ական թվականները լինելով ուսման տարիներ, միաժամանակ նրա համար դարձան պատմության և լեզվագիտության ուսումնասիրման ժամանակաշրջան: «Հին Հայաստանի ներքին կենցաղը» գիտական աշխատության համար Եղյանցը Պետերբուրգի համալսարանում 1859 թ. ստանում է մագիստրոսի կոչում: Մինչ այդ նա երկու տարի Թիֆլիսում զբաղվել էր ուսուցչությամբ: Այդ ուշագրավ աշխատությունը ռուսերեն լեզվով լույս է տեսնում Պետերբուրգում 1859 թ., իսկ Պ. Պոռշյանի թարգմանությամբ՝ հայերեն, 1864 թվականին, Շուշի քաղաքում:

1884 թ. Պետերբուրգում լույս է տեսնում «Բոնի միություն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ: Ժամանակակից Յիշատակարանք» աշխատությունը, որի առաջաբանը գրված է Կ. Եղյանցի կողմից, իսկ փաստաթղթերի թարգմանությունը կատարել է Ս. Մալխասյանցը:

Կ. Եղյանցը հրատարակել է նաև պատմական մի քանի գործեր.

«Պատմութիւն Ղևոնդայ մեծի վարդապետի հայոց»: Առաջաբանը՝ Կ. Եղյանի: Պետերբուրգ, 1891.

«Յովհաննու Դարդելի ժամանակագրութիւն Հայոց», Պետերբուրգ, 1891: Առաջաբանը՝ Կ. Եղյանի:

1898 թ. ռուսերեն լեզվով Պետերբուրգում լույս է տեսնում «Պետրոս Մեծի հարաբերությունները հայ ժողովրդի հետ» ուսումնասիրությունը, որը հայ և ռուս ժողովուրդների պատմական կապերի ուսումնասիրման կարևոր աղբյուր է: Այդ եզակի աշխատության մասին «Ազգագրական հանդես»-ում[1] ընդարձակ և բովանդակալից գրախոսական է գրում նշանավոր բանասեր, պատմաբան ու ազգագրագետ, հետագայում Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ Ստ. Լիսիցյանը՝ վեր հանելով գրքի արժանիքները ու նշելով «շատ հարմար ժամանակին» լույս տեսնելը: Գրքի ընդարձակ առաջաբանը (150 էջ) պատմական տեսություն է ռուսական կառավարության՝ հայերի հետ ունեցած հարաբերությունների վերաբերյալ՝ Պետրոս Մեծի ժամանակաշրջանից մինչև 19-րդ դարը: Աշխատության երկրորդ մասում զետեղված են վավերագրեր (305 միավոր), որոնք քաղված են Մոսկվայի գլխավոր և Պետերբուրգի արտաքին գործերի մինիստրության, Ավստրիական պալատական պետական, Բավարական-արքայական պետական դիվանատներից և վերաբերում են 1698—1736 թվականներին:

Փաստաթղթերը դասավորված են ժամանակագրական կարգով, որով թե՛ պատմական անցքերի կապն է ճշտությամբ պահպանվում և թե՛ հեշտանում է ցանկացած վավերագրի որոնումը: Թեև վավերագրերի մեծ մասը թարգմանված է ռուսերեն, բայց կան նաև հայերեն, ֆրանսերեն, գերմաներեն, լատիներեն և պարսկերեն լեզվով գրված վավերագրեր: Վերջում կա հայերեն և եվրոպական լեզուներով հատուկ անունների ցանկ: Կ. Եղյանցը այս աշխատությունը կազմելու համար ոչ միայն տասնյակ տարիների ջանադիր աշխատանք է կատարել, այլ նաև գործին մոտեցել է գիտական հմտությամբ, բարեխղճությամբ: Ստվարածավալ այս աշխատությունը համարվել է նշանակալից երևույթ, և ժամանակի հայ մտավորականությունն ու մամուլը ողջունել են նրա հրատարակումը բազմաթիվ արժեքավոր գրախոսականներով:

Ահա թե ինչ ենք կարդում այդ մասին

[1] «Ազգագրական հանդես», 1898, № 2, էջ 293—311:

«Հանդէս ամսօրեայ»-ի էջերում. «Բազմաթիւ տարեաց քրտնաջան աշխատութեան արդիւնք՝ պր. Կ. Եզեան վերջերս հրապարակ հանած է այս՝ կրնանք ըսել իր տեսակին մէջ միակ գործն, որ յիրաւի գլուխ գործոց մըն է եւ շատ կարեւոր աղբիւր եւթնեւտասներորդ դարուն վերջին քառորդին եւ ութեւտասներորդ դարուն առաջին կիսուն հայկական պատմութեան համար»[2]:

Եզյանցի գրչին է պատկանում նաև «Начало сношений Эчмиадзинского Патриаршаго престола сь Русским правительствомь. Историческое изследование по неизданнимь документамь., Тифлись, 1901 г.» (Էջմիածնի պատրիարքական Աթոռի գրագրութիւնների սկիզբը ռուսաց կառավարութեան հետ: Պատմական հետազոտութիւն չհրատարակուած վկայագրերի հիման վրայ, Կ. Եզեանի: Թիֆլիս, 1901.) ուսումնասիրությունը:

Այս աշխատության մեջ ընդգրկված են պատմական նոր տեղեկություններ և արժեքավոր փաստաթղթեր: Գրքի առաջին 53 էջերում ամփոփված է բուն հետազոտությունը, ապա հետևում են Սիմեոն կաթողիկոսի կոնդակները և բազմաթիվ այլ պատմական փաստաթղթեր: «Պ. Եզեանցը քննելով և ուսումնասիրելով Էջմիածնի հայրապետների ներքին գործերը և արտաքին քաղաքականութիւնը, լուսաբանում է նոցա յարաբերութիւնները Ռուսաց կայսրութեան հետ, պատմական փաստերով ապացուցանում է, թէ ինչպիսի բարոյական կապ և վստահութիւն էր հաստատուած Ռուսաստանի և Հայոց ազգի մէջ Մեծն Պետրոսից սկսեալ մինչեւ Եկատերինէ կայսրուհին»[3]:

Կ. Եզյանցը իր գիրքը ավարտում է հետևյալ խոսքերով. «Այսպես, Մեծն Պետրոսի ժամանակ Ռուսաստանի և հայ ժողովրդի մեջ գոյացած կապը և վստահությունը լիովին գիտակցաբար ամրացավ Եկատերինեի իմաստալի կառավարության օրով. Ռուսաստանի ամեն կողմի հայերի անձնվիրությունն ու մատուցած ծառայությունները, որոնք վավերացված են գահի բարձրությունից բազմաթիվ հրովարտակներով հանուն հայ ժողովրդի և նորա հովվապետների, այս հարաբերությանց բնական հետևանքն էին: Պահպանել այս զգացմունքները, նպաստել նոցա զարգանալուն յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտականությունը պիտի համարվի, որ յուր հայրենիքի բարիքն է փափագում, մանավանդ իշխանություն ունեցող անձանց. վատ ծառայություն են անում նոքա, որոնք թուլացնում են այդ բարոյական կապերը և փոխադարձ անվստահություն են արծարծում այնտեղ, ուր դրա համար պատմական հող չկա: Անցյալի հետ ծանոթանալը հեռացնում է տարաձայնությունների շարժառիթները և փոխադարձ հարգանքի ու համակրանքի բարի զգացմունքներ է ներշնչում: Մեզ երջանիկ կհամարենք, եթե մեր հետազոտությունը այդ կողմից որքան և իցե օգուտ բերի»:

Կ. Եզյանցը մամուլի էջերում ունի նաև բազմաթիվ հայագիտական հոդվածներ, որոնցից են «Հովսեփ Իզմիրյանցի կտակը և նրա կատարումը» («Արարատ», 1889, № 12, էջ 661—668), «Եվրոպական լեզուներով գրված գրքեր և հոդվածներ» (1876—1886 թթ.), «Հանդես գրակ. և պատմական», 1890, № 3 և այլն:

Կարապետ Եզյանցի գործունեության առավել նշանակալից կողմը, որի շնորհիվ նա ձեռք բերեց մեծ պատիվ և հեղինակություն, նրա նվիրվածությունն էր ազգի լուսավորության և կրթության հարցերին: Նրա հավատամքը հայ ազգին օգտակար լինելն էր: Դա առավել ևս ընդգծվում էր հայրենիքից հեռու գտնվելու հանգամանքով: Երկար տարիներ ապրելով Պետերբուրգում, նա երբեք չէր հեռացել հայությունից, ընդհակառակը, մշտապես կապված էր հայ իրականության հետ և իր մասնակցությունն էր բերում ազգային մշակույթի զարգացմանը նպաստող բոլոր ձեռնարկումներին: 1860 թվականից պաշտոնավարելով ներքին գործերի մինիստրությունում որպես խորհրդական, նա բաց է անում մի մասնավոր պանսիոն, հատկապես գիմնազիաներն ավարտած հայ երիտասարդների համար, որպեսզի նրանք այդտեղ պատրաստվելով՝ հնարավորություն ունենան համալսարան ընդունվելու: Նրա պանսիոնում հավաքված էին մոտ 10—12 աշակերտ: Ինչպես նշել են ականատեսները, աշակերտներն ապրում էին շատ լավ, թե՛ բնակարանը, թե՛ նիստն ու կացը, թե՛ նրանց հետ վարվելու ընտանեկան ու սիրալիր ձևը գոհացուցիչ էին և այդպես էլ շարունակվեցին մինչև վերջ: Ինքը Եզյանցը դասավանդում էր պատմություն և աշխարհագրություն, մյուս առարկաների համար հրավիրվում էին մասնագետ ուսուցիչներ: Այդ պանսիոնում է սովորել նաև «Փորձ» ամսագրի և «Արձագանք» թերթի խմբագիր, հայտնի հրապա-

[2] «Հանդէս ամսօրեայ», 1898, № 12, էջ 380—381:

[3] «Բազմավէպ», 1902, № 11, էջ 499:

ռակախոս և հասարակական գործիչ Աբգար Հովհաննիսյանը:

Հայր Մկրտիչ Պոտուրյանը իր «Հայ հանրագիտակ»-ում գրում է. «Կ. Եզեան մասնագէտ էր հայ մեծատուններու սիրտը և ազգային զգացումները արթնցնելու կամ քաջալերելու և զանոնք դեպի ազգային բարեգործութիւն առաջնորդելուն մէջ: Այսպէս, Գոգոլեան աղջկանց վարժարանն ի Նախիջեւան, Յովնանեան—Մարիամեան աղջկանց վարժարանն ի Թիֆլիս, Ներսէսեան դպրոցի նոր շենքի կառուցումն ի Թիֆլիս Ալ. Մանթաշեանի, հայ եկեղեցւոյ կառուցումն ի Բարիզ ձեռամբ նոյն Մանթաշեանի, Իզմիրեան մրցանակի հիմնարկութիւնը, Ասպետ Ջունդի կտակը Եւրոպա սան ուղարկելու, Մարիամ Կադալեանցի ըրած կտակը Սանասարեան վարժարանին, և այլ տասնեակ առիթներով ս. Էջմիածնի նպաստելու, կամ բարձրագոյն դպրոցներու մէջ սաներ պահելու եւն, եւն, բոլորը Եզեանի ներշնչումներն են»[4]:

Նրա գործունեության ընթացքում շատ են եղել հանդիպումներ առանձին հայ ուսումնատենչ երիտասարդների հետ, որոնք ազատորեն մուտք են գործել իր բնակարանը, մինչև իսկ աշխատատեղը, խոսել նրա հետ իրենց կարիքների մասին, հայ մշակույթի զարգացմանը նպաստելու իրենց պատրաստակամության մասին: Կ. Եզյանցը միշտ էլ աջակից է եղել իր խորհուրդներով՝ նրանց ցույց տալով նյութական և բարոյական օժանդակություն: «Մայրաքաղաքի ուսանողներից շատերն են վայելել նրա աջակցությունը բարձրագույն դպրոցներ մտնելուց, շատերն են ազատ ել ու մուտք ունեցել նրա բնակարանը, վայելել նրա ընտանիքի սիրալիր հյուրասիրությունը, շատերն են պարբերաբար հրավեր ստացել մասնակցելու նրա շաբաթական «ժուռֆիքսներին», ուր շահեկան զրույցներ ու մտքերի փոխանակություններ էին կատարվում և ուր նրանք որոշ ուղղություն էին ստանում ազգային կուլտուրական խնդիրների շուրջը ու պատրաստություն ձեռք բերում իրենց ապագա ազգային գործունեության համար: Այդ բոլորի հետևանքով հասկանալի պիտի լինի, թե ինչու Եզյանցի անունն ու հոչակը իր ժամանակ այնքան տարածված են եղել հայերի մեջ, հայ աշխարհում, թե ինչու նա դարձած է եղել մի կենտրոնական անձն, որին դիմել են ամենքը, և՛ Էջմիածինը, և՛ հայ ազգային գործի գլուխ կանգնած մարմինները, և՛ հայ մասնավոր անհատները, որոնք ի վիճակի են եղել և կամեցել են ազգի կուլտուրական գործի համար մի բան անել...» —գրում է իր հուշերում Եր. Շահազիզը[5]:

1904 թ. նոյեմբերի 6-ին մեծ շուքով և հանդիսավորությամբ Պետերբուրգում տոնվում է արևելյան լեզուների մագիստրոս Կարապետ Եզյանցի գրական, պետական ու հասարակական գործունեության 50-ամյակը: Հանդեսը սկսվում է Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմյանի շնորհավորական կոնդակի ընթերցումով: Մեջ ենք բերում այդ կոնդակն ամբողջովին, որը տպագրվում է առաջին անգամ:

«Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Գերազանցի Պ. Կարապետի Յարութիւնեան Եզեանց, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս նուիրեմք յառաքելական Աթոռոյ աստի ողջոյն հայրական հանդերձ Հայրապետական օրհնութեամբ:

Աստուածային և երկնաւոր տնտեսութիւն, որ գիտէ տալ զշնորհս արժանաւորաց և պարգևէ առատապէս զձիրս իւր, որք գիտեն իմաստութեամբ մատակարարել, առատացոյց ապաքէն ի Ձեզ զպարգևս իւր, որում արժանի զՁեզ հանդիսացուցիք ի վաղ ժամանակէ յաւուրց անտի երիտասարդութեան Ձերոյ: Որդեակ հանճարաշատ, պատիւ մեծ է ազգիս և եկեղեցւոյ մերոյ սրբոյ և Առաքելականի և փառք ինձ հօրս հասարակաց, հանուրց Հայկազանց ի սիրկեանս, ի տես միոյ հարազատ որդւոյ, որ խոնարհութեամբ սրտի և ի հեզութեամբ հոգւոյ թևակոխելով յասպարիզի կենցաղոյս բարձրացաւ փառօք, ճոխացաւ իմաստութեամբ, փայլեցաւ հանճարով, տալով ըստ բանի Փրկչին զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ:

Ո՜ տայր ինձ զթեւս արծուոյ զի վերացեալ պանայի և իջանելով այդր ի հանդեսի յիսնամեայ հոբելինի Ձերոյ ճառէի բարձրաբարբառ եթէ Պ. Կարապետն Եզեանց հարազատ է եկեղեցւոյն Հայաստանեայց, քանզի հանապազ զբարեզարդութենէ եկեղեցւոյն և զբարելաւութենէ պաշտօնէից նորին խորհեաց և ոչ երբէք թերացաւ ի պարտիսն և ի յանձնարարութիւնսն, զորս վստահութեամբ յանձնարարեցին նմա Հայրապետքն Հայոց: Ազգասէր է, զի անկեղծութեամբ սրտի վասն բարօրութեան, շահուց և կարօտութեանց հայրենեաց տքնեցաւ:

Կրթասէր է, զի ողջամիտ ոգւով ուղեցոյց բարերարաց ազգիս ուսանող սերն-

[4] «Հայ հանրագիտակ», գիրք Գ, 1938, էջ 656—657:

[5] «Էջմիածին» ամսագիր, 1946, № 8—10, էջ 62—63:

դեան հանդիսացաւ, զամենեսեան ի բարին, ի կատարեալն և ի ճշմարիտն առաջնորդելով: Գրաւէր ապացոյցք վաստակացըն մշտաբարբառ հատորք ի հրապարակի գիտական աշխարհի:

Իսկ որ ինչ զպետական ծառայութեանց, ես թողում զայն ճառել նոցա, որք առաւել մօտ են այդր, և գեղեցկապէս գիտեն դասաւորել զաստիճանս և թուել զպարգևսն շնորհեալս յօգուտ ափառ կայսերց հաւատարմին պետութեան և ինքեանց Պ. Կարապետի Եզեանց, որ վասն զարգացման և լուսաւորութեան Մեծին Ռուսիոյ ոչինչ անխայեաց յինքենէ ըստ մտաւորին և բարոյականի:

Ապա ուրեմն օրհնեսցին վաստակք և արդիւնաւորեսցին ջանք Ձեր, Գերազնիւ Յոբելեարդ, որ ի սիրկեանս համարձակապէս փառաւորիս փառօք և ընդունիս զտրիտուրն յիսնամեայ վաստակացդ:

Ընդ բազմաթիւ շնորհաւորութեանցն և շնորհակալեացն, ընկալ և զշնորհաւորութիւնս ի հայրապետէն Հայոց Մեծաց, որ յանկեղծաւոր սրտէ և ի բոլորանուէր հոգւոյ յղէ կոնդակաւս ի Հայոց Աստուծահիմն Սրբավայրիս հանդերձ շնորհօք և օրհնութեամբ երկնաւորին և հեղինակին հաւատոյ Հայաստան աշխարհի մերս լուսաւորչի: Բազմապատկեսցին աւուրք կենաց օրհնեալ հարազատիդ, զի ընդ վշտացելոյս և դու վշտակիրդ տեսցես զաւետաբեր Գարուն Հայաստան երկրի, բարօրութիւն և բարգաւաճումն որդւոյ նորին և եկեղեցւոյ Սրբոյ: Ամէն:

թ. 1051

ի 28ն հոկտ. 1904 ամի»[6]:

Ապա ընթերցվում են ուղերձներ Մոսկվայի հայ գաղութից, Պետերբուրգի հայ եկեղեցական խորհրդից: Ելույթ են ունենում բազմաթիվ թերթերի, ամսագրերի և հանդեսների ներկայացուցիչներ, մտավորականներ, պետական գործիչներ: Հանձնվում են կառավարական պարգևներ: Այնուհետև կազմակերպվում են հոբելյարին նվիրված այլ միջոցառումներ:

Հոբելյանից կես տարի անց, 1905 թ. մայիսի 31-ին, Պետերբուրգում մահանում է Կ. Եզյանցը:

Անվանի պատմաբան, ազգագրագետ, մանկավարժ, թարգմանիչ, «Դիվան հայոց պատմության» 13 ծավալուն հատորների հեղինակ Գյուտ ավագ քահանա Աղանյանցը իր «Լումայ» գրական, պատմական ամսագրում գրում է.

«Հայության հին սերունդի սակավաթիվ ականավոր ներկայացուցիչներից մեկն էլ պակասեց: Հեռագիրը մեզ գուժեց, որ Պ. Բուրգում մայիսի 31-ին կնքել է յուր մահկանացուն արևելյան լեզուների մագիստրոս և իսկական գաղտնի խորհրդական Կարապետ Հարությունյան Եզյանցը դեռ չբոլորած յոթանասուն տարին, որի կիսադարյան պետական ծառայության և հայ գրական ասպարեզում ունեցած գործունեության հոբելյանը տակավին մի քանի ամիս առաջ կատարեց հայ հասարակությունը:

Ով փոքր ի շատե ծանոթ է մեր եկեղեցու և նորա Պետերի վերջին քառասուն տարվա պատմության, նորան քաջ հայտնի կլինի այն մեծ դերը, որ կատարել է գիտնական և բնական մեծ խելքով օժտված Կարապետ Եզյանը Մայր Աթոռի շահերի պաշտպանության վերաբերմամբ. ուստի և նորա կորուստը շատ զգալի է ինչպես հայ գրական աշխարհի, նույնպես էլ ամբողջ հայության համար»[7]:

Կ. Եզյանցի դին Պետերբուրգից տեղափոխվում է Մոսկվա և թաղվում Եզյանների տոհմական դամբարանում:

Խոր սուգ է ապրում նաև Մայր Աթոռ ս. Էջմիածինը:

«Կարապետ Եզյանի մահվամբ հայ ազգը կորցնում է սակավաթիվ գիտնականներից միանգամ, որը համեստ դիրքով միշտ եղել է հասարակական գործունեության ասպարեզում և թողել հայտնի արդյունքն ու հետքը: Թաղումը կատարվեց Մոսկվայում Բեսսարաբիո առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսի ձեռամբ, իսկ Մայր Աթոռում եղավ հատուկ հոգեհանգիստ, որի ժամանակ դամբանական խոսեց Հուսիկ վարդապետ Զոհրաբյանը»[8]:

Կարապետ Եզյանցի մահը խոր վիշտ պատճառեց նաև Կ. Պոլսի հայությանը. «Թուրքիո հայ մամուլին մեջ՝ կրթական և գրական ձեռնարկություններու առթիվ շատ հեղեղված մեծ անուն մը եղած էր Եզյանց, որու մահվան հանդեպ Թուրքիո Հայոց պատրիարքությունը իր ամենեն ավելի նշանակելի արտահայտությունը ըրավ, արտահայտություն մը վշտակցության, հարգանքի և համակրանքի»[9]:

Կ. Պոլսի Օրմանյան պատրիարքը ոչ միայն ցավակցական հեռագիր է ուղարկում հանգուցյալի հարազատներին, այլև «իբր նախագահ Սանասարյան վարժարա-

[6] ՀՍՍՀ Պատմության ՊԿԱ, ֆ. 57, ց. 2, դ. 92, թ. 117բ—118ա:

[7] «Լումայ», 1905, № 4, էջ 3:

[8] «Արարատ», 1905, էջ 611—612:

[9] «Արարատ», 1905, էջ 611—612:

ևի խնամակալության և Հ. Իզմիրյանց հանձնաժողովի, ցավակցություն հայտնեց հեռագրով՝ ուր որ անկ է և հրահանգ տըվավ՝ որ այդ երկու հաստատությանց անունով երկու շատ ճոխ պսակներ դրվեն հանգուցելոյն դագաղին վրա»[10]:

Ութօրեքին հոգևոր պաշտոն է կատարվում Կ. Պոլսի բոլոր եկեղեցիներում: Թուրքիո հայոց պատրիարքը անձամբ պատարագ է մատուցում և «Իմաստութիւն շինեաց իւր տուն եւ կանգնեաց ի նմա սիւնս եօթն» բնաբանով քարոզ է խոսում և վեր հանում Կ. Եզյանցի մշակութային, ազգային ու եկեղեցանվեր գործունեությունը: Եզյանցը ակտիվ մասնակցություն է ունեցել հայ եկեղեցական կյանքին, մասնակցել է մի շարք քաղաքների եկեղեցիների կանոնադրության մշակման գործին և երկար ժամանակ վարել է Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդի անդամի պաշտոնը: Օրմանյան պատրիարքի դամբանականներբողականում ասված է.

«Անոր սիրտը կծավալեր ամեն կողմ, ո՛ւր հաստատված է Հայ Եկեղեցին: Կատարյալ էր իր հավատքը. տաք սրտով կվերաբերեր դեպի Մայր Աթոռ, և ատոր անձուկ օրերուն մեջ խորհրդատու մըն էր և դժվարությանց և ելից հնարներ ցույց տվող, անկեղծ հավատացյալ զավակն էր եկեղեցվո: ...Բարեխառնության առաքինությունը սիրելի էր իրեն. կրնանք ըսել թե ինքը պետական ծառայության ժամերեն դուրս իր համայնքին համար միայն ապրեցավ, վասն զի աշխարհային ամեն վայելքե հրաժարյալ կյանք մը ունեցավ, իր անձին համար դրամ չվատնեց, և բոլորանվեր աշխատեցավ օգտակար ըլլալու Հայ Եկեղեցվո, և ապրեցավ անաղարտ ու մաքուր կյանքով...: Որպես արևելագետ և բանասեր և պատմաբան, երևելի հանդիսացած էր և ռուս կառավարության կողմե միշտ ինքը ներկայացուցիչ կդրվեր Արևելյան լեզվաց միջազգային ժողովներուն:

Գրական արդյունավորությամբ կամ ինչպես կըսենք՝ երկասիրություններով ալ հարուստ, տասնի չափ հատորներ կթողու, որք իր անունը կկրեն և որք մնայուն և իրական արժանիք ունին»[11]:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի այս հեղինակավոր գնահատականը բավական է համոզվելու Եզյանցի աշխատությունների գիտական բարձր արժեքին:

Ահա թե ինչ է գրում այդ մասին նշանավոր հասարակական գործիչ, փիլիսոփա, գրաքննադատ և մանկավարժ Իսահակ Հարությունյանը (1863—1928 թթ.).

«Իբրև գրական գործիչ՝ Եզյանը հանդիսացել է լուրջ գիտնական և մասնագետ աշխատող: Նրա գրական, պատմական հրատարակությունները—«Ղևոնդ պատմագիր», «Ժամանակագրութիւն Դարդելի», «Բոնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ» և այլն, համապատասխանում են ժամանակակից գիտնական պահանջներին: Եվրոպական հրատարակություններից ետ չեն մնում և ճոխացրած են բազմաթիվ պարզաբանող ծանոթություններով, որից երևում է հրատարակչի հմտությունն ու գիտնական նախապատրաստությունը»[12]:

Կարելի է շարունակել Կ. Եզյանցի մասին մամուլի այլևայլ մարմինների, մշակույթի բազմաթիվ գործիչների ու մտավորականների կարծիքների մեջբերումը, որոնք բոլորն էլ նույն ճշմարտությունն են հաստատում:

Անուրանալի է Կ. Եզյանցի ծառայությունը հայ մշակույթին և Եկեղեցուն: Նա իր գործունեությամբ և անխոնջ վաստակով մեծապես նպաստել է հայ ժողովրդի ազգային և մշակութային զարթոնքին և թողել մնայուն հուշարձաններ, որոնցից հառնում է ներհուն գիտնականի և մեծ հայրենասերի անձնուրաց կերպարը:

Երախտագետ սերունդները և Հայ Եկեղեցին չեն մոռանում բոլոր նրանց, ովքեր քայլել են ճշմարտության որոնման և հայ մշակույթի զարգացման դժվարին ճանապարհով:

---

[10] Նույն տեղում:

[11] Նույն տեղում, էջ 615—617:

[12] «Ազգագրական հանդես», 12-րդ գիրք, 1904, էջ 302:





ՍԱՐԳԻՍ ՅԱՓՈՒՋՅԱՆ

ՀԻՄՆԱՐԱՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

(Ա. Զոպանյան: Կյանքը և գործը: Երևան, Սովետական Գրող, 1987 թ., 480 էջ, հեղ.՝ Կ. Լ. Դալլաքյան)

«Կուսակցությունը, որում կը պատկանիմ, կը կոչվի հայոց ազգ»

Ա. Զոպանյան

Գրվեց-լրացվեց հայ մշակույթի պատմության բաց էջերից մեկը ևս. լույս տեսավ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ, բանասիրական գիտությունների թեկնածու, գրականագետ Կարլեն Լևոնի Դալլաքյանի «Արշակ Զոպանյան» ծավալուն մենագրությունը: Հիմնարար մի աշխատություն, որի հինգ բաժինների մեջ հմտությամբ ու համբերատար սիրով պրպտված, քննված ու ընդհանրացված են Ա. Զոպանյանի կյանքն ու մոտ 70-ամյա բազմադեմ ու բազմաբնույթ գործունեությունը:

Գրել համապարփակ այս աշխատության բազմաշերտ բովանդակության, արծարծած բազում խնդիրների և գիտական հիմնարար ձեռքբերումների մասին, պիտի նշանակեր գրել մի նոր աշխատություն: Պահպանելու համար հոդվածի սահմանված սահմանները, կբավարարվեմ մի քանի կարևոր հարցադրումներով ու հաստատումներով:

Նախ՝ ի՞նչն է եղել այս աշխատության հիմնական շարժառիթը, նպատակն ու մղիչ ուժը, և գիտակցե՞լ է արդյոք հեղինակը, թե ինչպիսի՞ «սահման չճանաչող», «անսպառելի» ու կնճռոտ գործի է լծվում ինքը: Ա. Զոպանյանի մասին սփյուռքում և մեզանում գրված-հրատարակված գրքույկների ու հոդվածների մասին խոսելիս, Կ. Դալլաքյանը ինքն անձամբ է պատասխանում այս հարցին.

«Այդ բոլորը,—ասում է հեղինակը,—այնուամենայնիվ, փարսախներով հեռու է բավարար լինելուց: Հայ ժողովրդի շահերին մինչև վերջ նվիրաբերած կյանքի, զարմանք ու հիացմունք առաջացնող բազմարդյուն տաղանդի, մեր ազգային մշակույթին և, այո՛, համաշխարհային մշակույթին մատուցած ծառայությունների դիմաց անհրաժեշտ է, որ առաջին հերթին հայ ընթերցողը բազմակողմանի ու խոր ճանաչի Արշակ Զոպանյանին: Անհատի պաշտամունքի շրջանի կրքերը ստիպողական մոռացության քսանամյա բացատ ձգեցին մեր հիշողության մեջ, որի ընթացքում նոր սերունդը պատեհություն չունեցավ ճանաչելու Արշակ Զոպանյանին»: «Ձեռնարկելով սույն ուսումնասիրությանը,—շարունակում է հեղինակը,—մեր նպատակը է եղել ջանալ ինչ-որ չափով լրացնելու այդ բացը: Ասում ենք, ինչ-որ չափով,

ոչ թե պատշաճ համեստությունը պահպանած լինելու համար, այլ որովհետև Չոպանյանի գործունեությունը սահման չճանաչող նյութ է հայթայթում հետազոտողի համար»:

Մեջբերվածը և աշխատության յուրաքանչյուր էջի ուշադիր ընթերցումը մեզ վերջնականապես բերում են այն համոզման, որ հեղինակի համար այս «քաղցր լուծն» իր ուսերին վերցնելու հիմնական շարժառիթ են հանդիսացել Ա. Չոպանյանի կյանքի ու գործի նկատմամբ երախտագիտության ու պատկառանքի զգացումը, մեր հիշողության և հայ մշակույթի պատմության մեջ հանիրավի առաջացած բացը վերացնելու ցանկությունը, ինչպես նաև մեր մեծ երախտավորի նկատմամբ արդարությունը հաստատագրելու ներքին ազնիվ մղումը:

Հավատենք ու հաստատագրենք մեր հերթին, որ մենագրության հարգարժան հեղինակը գիտական բարձր մակարդակով է կատարել ինքնառաջադրանքը: Պրպտելուսումնասիրելով վիթխարածավալ փաստագրական նյութ և ցուցաբերելով գիտնականի խորաթափանցություն ու կորովի սկզբունքայնություն, հեղինակը բացահայտել է ճշմարտությունը Ա. Չոպանյանի մասին. «Ասես վերածնության դարաշրջանի գործիչ լինի իր կարողությունների համապարփակությամբ ու հետաքրքրությունների անսպառությամբ, և էությամբ՝ մեր պատմության վերջին հարյուրամյակի ծընունդն էր, որ պտղաբերեց առատ, անհատնում՝ միշտ դարին ու ժողովրդին կապված բոլոր նյարդերով, արտով ու մտքով, նրա բարձր ու հիմնական շահերի ջերմ պաշտպանն ու արտահայտիչը եղավ դառը ու դժվարին ազատագրական պայքարի ուղիներում»: «Հենվելով իր նախորդների կատարած գործի վրա,—շարունակում է գիտնականը,—բայց սկսելով գրեթե նորից և գրեթե միայնակ, Արևմտյան Եվրոպայի քաղաքակիրթ ազգերի հայացքի առջև բարձրացրեց հայկական քաղաքակրթության մի ամբողջ լեռ (Etude sur Grégoire de Narek, Poèmes arméniens anciens et modernes, Chants populaires arméniens, Les Trouvères arméniens, La Roseraie d'Arménie) և մի բուռ կարեկցանք չէ, այլ հպարտությամբ պահանջեց ըստ արժանվույն հիացմունք ու խոնարհում՝ իր ժողովրդի վեհ մշակույթի հանդեպ»:

«Պրպտող ու խանդող միտքը սիրառատ սրտի թելադրանքով մեր իսկ մշակույթի ընդերքում պեղեց վեր հանեց փոշիներից ու խլեց մոռացման գրկից հայ միջնադարյան քնարերգության մի ամբողջ շարք գագաթներ՝ Նարեկացի, Քուչակ, Ֆրիկ, Կոստանդին Երզնկացի, Նաղաշ Հովնաթան և ուրիշներ»:

Ահա թե ինչու վաղուց և բոլորի կողմից անհամբերությամբ սպասված աշխատությունն էր Կ. Դալլաքյանի «Արշակ Չոպանյան» մենագրությունը: Երբ մեկ շնչով կարդացինք ու ավարտեցինք այն, մեր առաջին մտածումն ու գնահատանքը ձուլվեց-կաղապարվեց Պարույր Սևակի իմաստուն պատկերի մեջ՝ «Արշակ Չոպանյանը ափի մեջ»: Արդարև, տարողունակ ու հմուտ «ափ», որ կարողացել է վեր պարզել ու բոլոր կողմերից տեսանելի դարձնել բանաստեղծ, արձակագիր, խմբագիր ու լրագրող, հայ և համաշխարհային մշակույթների բարձրակարգ թարգմանիչ ու մունետիկ, գրականագետ ու տեսաբան և քաղաքական ու հասարակական գործիչ Արշակ Չոպանյանի վիթխարի կերպարը, որ, ըստ գիտնականի՝ «...մի ամբողջ հանրագիտարան, որ բոլոր այդ ասպարեզներում բարձրացել է վեր՝ իր բազմաշերտ տաղանդի արգասիքը սփռելով ամենուր»:

Նշենք ուրեմն, որ ապշեցուցիչ լինելու աստիճան լայն են աշխատության ընդգրկման սահմանները. այն ներառնում է ոչ միայն Ա. Չոպանյանի 82 տարիների (1872—1954) մեղվաջանորեն բեղմնավոր կյանքն ու համարյա 70-ամյա բազմաճյուղ գործունեությունը, այլև տվյալ հարյուրամյակի հայ հասարակական-քաղաքական, գրական ու մշակութային կյանքի պատմությունը իր բախտորոշ իրադարձություններով, ճիգ ու ջանքով, դժվար պայքարով, հույսերով ու հուսախաբություններով, որոնք հմտորեն մատուցվել են աշխատության մեջ՝ համիդյան ռեակցիայի տարիներին, արևմտահայ 80-ականները, հասարակական գործունեության սկիզբը Փարիզում, «Անահիտի» ծրագիրը, հետադարձ հայացք հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ուղու վրա, դարասկզբի միջազգային հարաբերությունների գնահատականը և Չոպանյանի հայացքները ազգային-հասարակական պայքարի հետագա ուղիների վերաբերյալ, հայ մշակույթի տարածումը Եվրոպայում, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, նոր ճանապարհի սկզբին, շրջադարձ դեպի Սովետական Հայաստան, Սովետական Հայաստանի անկեղծ բարեկամը և այլ բաժիններում ու գլուխներում:

Աշխատության արժանիքների ու ձեռք-

բերումների որպես ամրաթել հենք ընդգրծենք նաև փաստագրական նյութի լիառատությունը: Եվ իրոք որ պրպտված, ճըշգըրտված, համակարգված, օգտագործված ու իմաստավորված է անհամար փաստագրական նյութ՝ քաղված հարյուրավոր գրքերից, պարբերականներից, թերթերից, նամակներից, հուշագրություններից, պաշտոնական գրություններից ու զեկուցագրերից՝ հայերեն, ֆրանսերեն, ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով: Նշենք, որ դրանց մի կարևոր մասը գիտական շրջանառության մեջ է մտցվում առաջին անգամ, և որոնց մեջ քիչ չեն այնպիսիք, որ կարևոր և նշանակալից են ոչ միայն Ա. Զոպանյանի կյանքի ու գործի, այլև հայ ժողովրդի այդ շրջանի պատմության համար: Բերենք միայն մեկ օրինակ.

«Օրոր» թերթում հրատարակված մի հեռագրից տեղեկանալով, թե Էնիս փաշան Այնթապի շրջանում նոր ջարդեր է մտմըտում, Ա. Զոպանյանը հրապարակային դիմում է կատարում Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դելքասիեին՝ խնդրելով միջամտել և կանխել սպանդը: Զոպանյանի իսկ խնդրանքով կառավարությանը դիմումներ են կատարում նաև ֆրանկո-հայկական միության անդամներ Բեռնարը, Լավիսը, Շարմըթանը: Կառավարությունը երեք ռազմանավեր է ուղարկում Միջերկրականի արևելյան ափերը «սովորական պտույտի», որոնք այցելում են Մերսին նավահանգիստը: Նախատեսվող սպանդը տեղի չի ունենում» (էջ 295): Նույնանման հուզիչ ու խոսուն փաստեր չե՞ն նաև 1915 թվականին, ի պատասխան Զոպանյանի անձնական դիմումի, Իսպանիայի Ալֆոնս 13-րդ թագավորի գործադրած ջանքերը Դ. Վարուժանի և ձերբակալված մյուս հայ նշանավոր մտավորականների փրկության համար: Կամ՝ հայկական հարցի մասին Գրիգոր Զոհրապի Marcel Léart կեղծանունով գրած և խիստ գաղտնի Ա. Զոպանյանին ուղարկած «La question arménienne à la lumière des documents» աշխատությունը հրատարակելու և տարածելու պատմությունը և այլն:

Եվ փաստական նյութի լայնահուն այդ հոսքի մեջ հեղինակը չի մոռացել ոչ մի այնպիսի փաստ, որ կարող էր պիտանի լինել Զոպանյան մարդու, ստեղծագործողի ու գործչի կերպարի ըստ ամենայնի բացահայտման համար: Ահա թե որտեղ պետք է փնտրել պատասխանը այն հարցի, թե ինչու մեծածավալ այս աշխատությունը իր կարևոր բոլոր դատողություններ, մեկնություններ ու եզրահանգումների մեջ հավաստի է, համոզկեր, նույնիսկ այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է Զոպանյանի կյանքի ու գործի տարակարծություններ ու վեճեր հարուցած երևույթների մասին: Հետագային Զոպանյանի կյանքն ու գործը ուսումնասիրող հեղինակները, անկասկած, երախտապարտ պիտի լինեն արգո գիտնականին նաև այս տեսակետից:

Իսկ, այնուամենայնիվ, ի՞նչն է կազմում աշխատության հարգանք պարտադրող գիտականության հիմքը, ինչի՞ վրա է խարըսխված այն: Կարճ ասած՝ պարբերացման ճիշտ սկզբունք և իրացման արդյունավետ մեթոդ, ահա այդ հիմքը: Աշխատության ընդգրկած ամբողջ ժամանակաշրջանը (1872—1954 թթ.) գրականագետը համապատասխան հատվածների է բաժանել՝ ելնելով Ա. Զոպանյանի գործունեության հիմնական փուլերից, որոնց հիմքում ընկած են հայ ժողովրդի արևմտյան հատվածի պատմության կարևոր իրադարձությունները: Հետևաբար հեղինակը անհրաժեշտ է համարել պարբերացման յուրաքանչյուր հատվածի բովանդակության էական կողմերը բացահայտել «Զոպանյանի կյանքի և գործունեության շարադրանքին միաձույլ, որով պիտի ջանանք առավել լրիվ արտացոլել Զոպանյանի հայացքների էվոլյուցիան թե՛ հասարակական, քաղաքական և ազգային-ազատագրական պայքարի խնդիրների և թե՛ գրական-մշակութային հարցերի վերաբերյալ»: Մեր խորին համոզմամբ ճիշտ է վարվել հեղինակը. փոխանակ նյութը ըստ ժանրերի տրոհելու, միավորել-համադրել է ըստ պարբերացման ժամանակի: Անշուշտ որ, վերջինս, որպես շարադրման մեթոդ, ավելի գիտական է և ավելի լայն հնարավորություն է ընձեռել գիտնականին ստեղծելու Զոպանյանի գործունեության, հայացքների, նրա երազների ու ձգտումների կապակից, չընդհատվող ոսկեշղթան, նրա սխրանքներով լի կյանքի սույն գիտական դյուցազնավեպը, նրա վիթխարի կերպարի հստակ, անշփոթ ընթերցվող սույն հուշարձանը:

Եվս մի հարցադրում. աշխատության հեղինակը Ա. Զոպանյանի կյանքն ու գործը այնքան համապարփակ ուսումնասիրելուց, ճանաչելուց ու գնահատելուց հետո ի՞նչ տեղ ու դեր է հատկացրել նրան մեր մշակույթի և հասարակական-քաղաքական պատմության «հոլովույթում»: Այս մակարդակի հարցադրումն անգամ պատվաբեր է ուզածդ անհատ մարդու համար, բայց արգո հեղինակը ավելի առաջ է գնում: Նա Ա. Զոպանյանին պատվո տեղ է հատկաց-

նում Խ. Աբովյանով բացված գրական, մշակութային ու քաղաքական նոր լուսավոր ճանապարհի մեծանուն շարունակողների՝ Մ. Նալբանդյանի, Հ. Սվաճյանի, Գ. Սրվանձտյանի, Հ. Պարոնյանի, Հ. Թումանյանի, Կոմիտասի, Թ. Թորամանյանի, Գ. Հովսեփյանի և այլոց կողքին: Ցույց տալուց հետո, որ Չոպանյանը իր ապրած հարյուրամյակի հասարակական-քաղաքական բոլոր ու ամեն տեսակ վերընդվալրումների մեջ մնաց նվիրվելու, ծառայելու միշտ պատրաստակամ, հավատավոր ու լավատես մեծ հայրենասերը, Կ. Դալլաքյանը շարունակում է. «Ա. Չոպանյանը եղավ մայր հայրենիքի ամենամեծ ու նվիրյալ բարեկամներից մեկը, իր բարձր հեղինակությամբ, անխորտակելի կամքով, անսպառ եռանդով իր ետևից տանելով ըսփյուռքահայության մեծ զանգվածներին, նրանց հայացքը գամելով Սովետական Հայաստանին, որպես «աղբյուրը լույսի» (էջ 478):

Սպառեցինք մեզ հատկացված ծավալը, բայց ոչ մեր ասելիքը այս հիմնարար աշխատության արժանիքների ու ձեռքբերումների մասին: Մենք կուզենայինք ասել նաև, որ աշխատությունը մի յուրօրինակ ազատ բեմ է հանդիսացել Ա. Չոպանյանի գիտական ու գեղագիտական, ինչպես նաև հասարակական-քաղաքական հայացքների, սկզբունքների ու տեսակետների համար, որոնք նույն մենագրության ճանապարհով մտնելով հայ գրականության ու մշակույթի պատմության ընթացքի մեջ, կօգնեն մեզ լավագույնս լուսաբանելու ժամանակակից շատ խնդիրներ: Այո, շատ կուզենայինք խոսել աշխատության գիտական սեղմ ու դիպուկ, բարձրակարգ հայերենի մասին, որ երբեմն նյութի «ճնշման» տակ կարողանում է դառնալ հուզական, պատկերավոր ու հնչեղ:

Աշխատության մեր չնշած արժանիքների ու ձեռքբերումների մեծ տոկոսից արդյո՞ք որևէ բան զեղչած կլինենք, եթե հայտնենք, որ «Արշակ Չոպանյան» մենագրությունը իր թեմայի առաջին և հնարավոր ամենամոտիկ համարժեքն է, ցարդ գրված բոլոր աշխատությունների մեջ: Այն ամրանիստ մի հիմնաքար է, որի վրա կարող է վստահորեն բարձրանալ չոպանյանագիտության ապագա մեծ շենքը իր բոլոր հարկ ու բաժիններով:



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(АПРЕЛЬ 1987 г.)

1. Пасхальная проповедь Его Святейшества Католикоса Всех Армян Вазгена I в кафедральном соборе св. Эчмиадзина, 19 апреля 1987 г. (стр. 3—5).

2. Обмен приветственными телеграммами и посланиями между Его Святейшеством Верховным Патриархом-Католикосом Всех Армян Вазгеном I и предстоятелями сестер Церквей по случаю святого праздника Воскресения Спасителя (стр. 6—8).

3. Поздравительное послание Его Святейшества Католикоса Вазгена I трем Первосвященным Престолам Армянской Церкви, епархиальным предводителям и церковным общинам по случаю праздника Святого Воскресения Спасителя (стр. 9).

4. Патриаршие приветственные послания собраниям духовенства и делегатов армянских церковных общин США и Канады (стр. 10—15).

5. Телеграмма Его Святейшества Католикоса Вазгена I председателю Благотворительного (Барегорцакан) Общества зарубежных армян Алеку Манукяну и поступивший на нее ответ (стр. 16).

6. **Священник Аветис Даниелян**—Его Святейшество Католикос Вазген I в кафедральном соборе св. Саргиса в Ереване, 3 апреля 1987 г. (стр. 17—20).

7. Встреча Его Святейшества Католикоса Вазгена I с иностранными журналистами, аккредитованными в СССР, 28 апреля 1987 г. (стр. 21).

8. Праздник Святого Воскресения в Первопрестольном Святом Эчмиадзине, 19 апреля 1987 г. (стр. 22).

9. **Нерсес Ванакан**—Духовные размышления о великом посте (стихотворение)—(стр. 23—24).

10. Годовщина армянского геноцида в Первопрестоле, 24 апреля 1987 г. (стр. 25—27).

11. Празднование 35-летия со дня хиротонии Его Высокопреосвященства архиепископа Ваче Овсепяна—предводителя западной епархии Армянской Церкви в США (стр. 28—30).

12. Церковная хроника, новости. Литургии, проповеди и описание других торжеств в Первопростольном Святом Эчмиадзине в апреле месяце 1987 г. (стр. 31—32).

13. Информационное сообщение канцелярии Первопрестольного Святого Эчмиадзина о расстрижении священника монастыря св. Гаяне Тер-Ншана Бейлеряна, 14 апреля 1987 г. (стр. 33).

14. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Завена Чинчиняна, предводителя армянской церковной епархии Египта, в кафедральном соборе Святого Эчмиадзина, 8 марта 1987 г. (стр. 34—36).

15. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Нерсеса Позапаляна в кафедральном соборе Святого Эчмиадзина, 18 апреля 1987 г. (стр. 37—38).

16. Проповедь иеромонаха Комитаса Овнаняна в кафедральном соборе Святого Эчмиадзина, 26 апреля 1987 г. (стр. 41—43).

17. Проповедь иеромонаха Абеля Оглукяна в кафедральном соборе Святого Эчмиадзина, 16 апреля 1987 г. (стр. 41—43).

18. **Священник Норайр Багдасарян**—Новости Араратской Патриаршей епархии (стр. 44—46).

19. Открытие родника-памятника в церкви св. Шогакат города Эчмиадзина, 24 апреля 1987 г. (стр. 47—48).

20. О предании праха госпожи Астхик Кюркчян земле на Родине (стр. 49—50).

21. Новости из Москвы (стр. 51).

22. **Сандро Бейбудян**—Карапет Езянц (исследование)—(стр. 52—57).

23. **Саргис Япуджян**—Фундаментальный труд (рецензия)—(стр. 58—61).



"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(APRIL 1987)

1. The Sermon of His Holiness Vasken I, the Catholicos of All Armenians, given in the cathedral of Holy Etchmiadzin, during the feast of Easter, 19th April 1987 (pp. 3—5).

2. The cables and letters of greeting exchanged between His Holiness Vasken I, the Supreme Patriarch and Catholicos of All Armenians, and the spiritual heads of the Sister Churches, on the occasion of the feast of Holy Resurrection (pp. 6—8).

3. The congratulatory letters of His Holiness to the three hierarchical Sees of the Armenian Church, all the diocesan prelates and church communities, on the occasion of the feast of Holy Resurrection (p. 9).

4. Messages of greeting of His Holiness addressed to the clergymen's and deputational meetings of U.S.A. and Canada (pp. 10—15).

5. The cable of His Holiness to Mr. Alex Manookian, the president of the Armenian General Benevolent Union. The answer of the cable (p. 16).

6. Father Avedis Danielian—His Holiness in the Saint Sarkis church of Yerevan, 3rd April 1987 (pp. 17—20).

7. Reception given by His Holiness to the journalists of abroad credited in the Soviet Union, 28th April 1987 (p. 21).

8. The celebration of the feast of Christ's glorious Holy Resurrection in the Holy See, 19th April 1987 (p. 22).

9. **Nerses Vanakan** —Spiritual meditations on the occasion of Lent (poem)—(pp. 23—24).

10. Commemoration of the 72nd anniversary of the Armenian Genocide in the Holy See, 24th April 1987 (pp. 25—27).

11. Festivities in Los Angeles on the occasion of the 35th anniversary of the sacerdotal ordination of Archbishop Vatche Hovsepian, the prelate of the western diocese of U.S.A. (pp. 28—30).

12. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the month of April (pp. 31—32).

13. The declaration of Holy See's Chancellory concerning the decision of His Holiness to defroct Neshan Beylerian, priest of the monastery St. Gayaneh, 14th April 1987 (p. 33).

14. The sermon of Archbishop Zaven Tchintchinian, the prelate of the Armenians of Egypt, in the Holy Cathedral of St. Etchmiadzin, 8th March 1987 (pp. 34—36).

15. The sermon of Archbishop Nerses Bozabalian in the Holy Cathedral, 18th April 1987 (pp. 37—38)

16. The sermon of Reverend Komitas Hovnanian in the Holy Cathedral, 26th April 1987 (pp. 39—40).

17. The sermon of Reverend Abel Oghlookian in the Holy Cathedral, 16th April 1987 (pp 41—43).

18. **Father Norayr Baghdassarian**—News from the Patriarchal diocese of Ararat (pp. 44—46).

19. Inauguration of the monument-fountain close to the church of Holy Shoghagath of Etchmiadzin, 24th April 1987 (pp. 47—48).

20. Transfer of the box of ashes of Mrs. Asdghik Kurkjian, benefactor of Holy Etchmiadzin, to the Fatherland, 20th April 1987 (pp. 49—50).

21. News from Moscow (p. 51).

22. **Sandro Behbootian**—Karabet Yezlantz (study)—(pp. 52—57).

23. **Sarkis Yapoodjian**—A fundamental monographical book (litterary critic)—(pp. 58—61).



„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(AVRIL 1987)

1. Homélie de Sa Sainteté Vasken Ier prononcée le 19 avril 1987 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la sainte fête de Pâques (pp. 3—5).

2. Echange de télégrammes et de lettres de félicitations entre Sa Sainteté Vasken Ier et les chefs spirituels des Eglises soeurs à l'occasion de la fête de la sainte Résurrection de notre Seigneur Jésus-Christ (pp. 6—8).

3. Lettres de félicitations de Sa Sainteté aux chefs des trois sièges hiérarchiques, aux prélats diocésains et aux communautés religieuses de l'Eglise apostolique arménienne à l'occasion de la fête pascale (p. 9).

4. Messages de bénédiction de Sa Sainteté adressés aux conférences des délégués (religieux et laïcs) des diocèses arméniens des Etats Unis et du Canada (pp. 10—15).

5. Télégramme de Sa Sainteté adressé à Monsieur Alex Manoukian, président de l'Union Générale Arménienne de Bienfaisance. Réponse du télégramme (p. 16).

6. **Père Avétis Daniélian**—La visite de Sa Sainteté à l'église métropolitaine St. Sarkis d'Erévan (3 avril 1987)—(pp. 17—20).

7. Audience accordée par Sa Sainteté aux journalistes étrangers accrédités en Union Soviétique (19 avril 1987)—(p. 21).

8. La fête de la Résurrection au Saint-Siège d'Etchmiadzine (19 avril 1987)—(p. 22).

9. **Nersès Vanakan**—„Méditations spirituelles à l'occasion du saint temps de carême" (poème)—(pp. 23—24).

10. Commémoration du 72e anniversaire du génocide arménien de 1915 au Saint-Siège d'Etchmiadzine (24 avril 1987)—(pp. 25—27).

11. Festivités organisées à Los Angeles à l'occasion du 35e anniversaire de l'ordination sacerdotale de l'archevêque Vatché Hovsépian, prélat du diocèse des Arméniens des Etats Unis (région occidentale)—(pp. 28—30).

12. Brèves informations concernant la célébration des saintes fêtes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois d'avril 1987 (pp. 31—32).

13. Déclaration du 14 avril 1987 de la Chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine concernant la décision de Sa Sainteté Vasken Ier pour défroquer le Père Nechan Beylérian, prêtre du monastère de Ste Gaïanée (p. 33).

14. Sermon de l'archevêque Zaven Tchintchinian prélat du diocèse des Arméniens d'Egypte, prononcé le 8 mars 1987 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pp. 34—36).

15. Sermon de l'archevêque Nersès Bozabalian prononcé le 18 avril 1987 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pp. 37—38).

16. Sermon du Père Komitas Hovnanian prononcé le 26 avril 1987 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pp. 39—40).

17 Sermon du Père Abel Oghloukian prononcé le 16 avril 1987 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pp. 41—43).

18. **Père Norair Baghdassarian**—Nouvelles du diocèse d'Ararat (pp. 44—46).

19. Inauguration du monument-fontaine érigé dans la cour de l'église St. Choghakat de la ville d'Etchmiadzine (24 avril 1977)—(pp. 47—48).

20. Transfert de l'urne cinéraire de Mme. Astghik Kurkjian, bienfaitrice du Saint-Siège d'Etchmiadzine, à la Mère patrie (pp. 49—50).

21. Nouvelles de Moscou (p. 51).

22. **Sandro Behboudian**—Karapet Yezianiz (étude)—(pp. 52—57).

23. **Sarkis Yapoudjian**—Un ouvrage monographique fondamental (compte rendu)—(pp. 58—61).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա Հայրապետի զատկական քարոզը՝ արտասանուած Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում 3
Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները 6
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին 9
Հայրապետական ողջույններ ԱՄՆ-ի և Կանադայի հոգևորականաց և պատգամավորական ժողովներին 10
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հեռագիրը ՀԲԸՄ-ի նախագահ Ալեք Մանուկյանին 16
ՀԲԸՄ-ի նախագահ Ալեք Մանուկյանի պատասխան հեռագիրը 16
ԱՎԵՏԻՍ ՔՀՆ. ԴԱՆԻԵԼՅԱՆ—Վեհափառ Հայրապետը Երևանի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում 17
Վեհափառ Հայրապետի հանդիպումը Խորհրդային Միությունում հավատարմագրված արտաքին գործերի լրագրողների հետ 21
Սուրբ Հարության տոնը Մայր Աթոռում 22
ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ—Հոգևոր խոհեր Մեծ պահոց առթիվ 23
Մեծ եղեռնի տարելիցը Մայր Աթոռում 25
Ամերիկայի Միացեալ Նահանգաց արևմտեան թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Ցովսէփեանի քահանայական ձեռնադրութեան 35-ամեակի տօնախմբութիւններ 28
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 31
Ծանուցում 33
Եգիպտոսի հայոց առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանի քարոզը Մայր տաճարում 34
ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱԼՅԱՆ—Քարոզ 37
ԿՈՄԻՏԱՍ ԱԲԵՂԱ ՀՈՎՆԱՆՅԱՆ—Քարոզ 39
ԱԲԵԼ ԱԲԵՂԱ ՕՂԼՈՒԳՅԱՆ—Քարոզ 41
ՆՈՐԱՅՐ ՔԱՀԱՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ—Արարատյան հայրապետական թեմում . . 44
Աղբյուր-հուշարձանի բացում Ս. Շողակաթ եկեղեցում 47
Տիկին Աստղիկ Քյուրքճյանի աճյունատուփը Մայր Հայրենիքում 49
Լուրեր Մոսկվայից 51
ՍԱՆԴՐՈ ԲԵՀԲՈՒԴՅԱՆ—Կարապետ Եզյանց 52
ՍԱՐԳԻՍ ՅԱՓՈՒՋՅԱՆ—Հիմնարար աշխատություն 58
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . 62
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin 63
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine . . . 64

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 14.04.1987 թ.: Ստորագրված է տպագրության 25.05.1987 թ.:
Տպագրական 4 մամուլ+3 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 664:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1987 թ.